



## ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ\*

### 2. ՄՍՐԴԸ ԻՆՉՊԵՍ ՈՐ ԷՐ

#### 1. ՄԱՐԴԸ

Ու հասած ենք ահա մեզ համար փափուկ դլուխ մը, երբ արդեն ուրվագծած՝ մարդու մը կյանքին և գործունեության զխափոր հանգրվանները, ստիպված ենք զայն նժարը դնել, և փորձել տեղ մը գտնել անոր՝ մեր պատմության մեջ: Արդեն դժվար կդառնա ալստեղ մեր գերը, որովհետև մեր առջև ունինք գեզերը նախատինքներուն, որոնց նշավակ դարձավ ան քանի կապերը և կես զարու ալլազան վաստակ մը, որ շփոթություն կպատճառե. մեկ կողմն անթիվ ըսի-ք-սավներ մարդկային բիծերու մասին և մյուս կողմն մախաղ մը լեցուն բերք: Պետք է վեր մնալ ուրեմն բոլոր նախապաշարումներին, հարևանցի անցնիլ բացասական գիծերուն վրայեն, և այդ բերքը կշիռք դնել: Եվ այդ բերքը կշռած ատեն պահ մը նույնիսկ մոռնալ խժրժանքները, զորս Օրմանյան ինքը կընեն ուրիշներու մասին, և իր իսկ անկեղծ պահերը, ուր, սիրտը բացած, ինքը կմատնանշե իր թերությունները:

Օրմանյան մարդը դատել այնքան ալ հեշտ չէ, որովհետև սովորական մարդերեն

չէր ան, որպեսզի կարելի ըլլար քանի մը բառով ուրվագծել զայն ու անցնիլ: Ու հետո, շեշտված էին մարդկային շատ մը գիծեր իր մեջ, և անհրաժեշտ էր զանոնք լավ դնել: Իր գործունեության զանազան երեսները ես անոնցմով կարենալ բացատրելու համար լրիվ: Եվ վերջապես այնքան խոսքի նյութ են եղած նկարագրի իր այդ գիծերը իր կենդանության և խարիսխն են կազմած իր շուրջ ստեղծված համակրություններն շատերուն, որ կարելի չէր թեթև անցնիլ անոնց վրայեն:

Օրմանյանի բիծերը գտնելու համար զրժվարություն չենք քաշել: Օրմանյան ինքն է, որ մեզ կառայնորգե զանոնք գտնելու: Պետք է հետևիլ միայն իր իսկ մատնանշումներուն: Ան եթե «Ազգապատում»-ին մեջ դեռ վերապահ է հաճախ, որովհետև պատմադիր Օրմանյանն է, որ կխոսի հոն պատրիարք Օրմանյանի մասին և ստիպված է հետեարար անոր գործերը պատմության հանձնել իրենց դրական գիծերուն մեջ առավելապես, ժեռնճ և խոսք-ին մեջ այլևս վերապահ մնալու պատճառներ չունի, որովհետև Օրմանյան մարդն է, որ կխոսի հոն Օրմանյան մարդուն վրա, իր մտածումները անկեղծորեն բնելով իր և ուրիշներու մասին:

\* Ետունակված «Էլիմիսի» ամսագրի 1981 թվականի Մ Ա-ից, Զ-ից, Ե-ից, Ը-ից, Թ-ից, ԺԱ-ից, ԺԲ-ից և 1982 թվականի Մ Ա-ից, Բ-ից, Գ-ից և Դ-ից:

Օրմանյան մարդը նանչնալու համար իր կյանքի զանազան երեսներուն տակ, անհրաժեշտ էր նախ անհատը զննել զոնե քանի մը բառով իր բնավորութիւն, իր խառնվածքին և իր նկարագրի գիծերուն մեջ, Առանց աղոր կարելի պիտի չըլար բացատրել իր մեջ հանրային մարդը, որ այնքան ցայտուն եղաւ գործունեութիւն իր ըլլոր դաշտերուն մեջ ալ, այնքան տարբեր իր շրջապատին և այնքան առարկա հասարակական դատաստաններու: Աղոյվ, մյուս կողմե, պիտի կըրնանք ըմբռնել նաև, թե ուրկե էր ապշեցուցիչ բեղմնավորութիւնը, որ իր կյանքին հատկանիշը եղաւ և ուրկե կուգային նաև իր վրեպները:

Նախընթաց զուխներու մեջ մենք տվինք զանազան հանգրվանները անոր կյանքին ու գործունեութիւնը: Զայն ճանչնալիս հետո հարկ իսկ չկա այլևս ըսելու, թե Օրմանյան օժտված էր բացառիկ իմացականութիւնով մը ըմբռնելու, տրամաբանելու և դատելու բացառիկ ուժով, որ հնարավորութիւն պիտի տար իրեն այնքան արագ հասուննալու և հասկ կապելու, և նվիրվելու ստեղծագործ ճիգերու:

Կմնա, որ այս անգամ ալ տեսնենք Օրմանյանը իր նկարագրի ընդհանուր գիծերուն մեջ, ավելի ճշգրիտ ըմբռնելու համար իր կյանքն ու գործունեութիւնը:

Ըսենք ամենն առաջ, թե աշխատելու իր բնածին ընդունակութիւնը, որ ամենն շքենաղ տուրքերն մեկն է, որով բնութիւնը կրնա օժտել մարդուն, մեծագույն նեցուկն եղաւ Օրմանյանին գործունեութիւնը բոլոր դաշտերուն վրա, որոնց մեջ նետեց զինք ճակատագրով, Անով է, որ Օրմանյան պտղաբերեց իր իմացականութիւնը:

Պիտի չկրնար սակայն օգտվիլ իր բնածին ձիրքերն, եթե անոնց կողքին լուսննար նաև հրաշագործ ալն ուժը, որ կամքն է մարդէակին մեջ: Օրմանյան այդ ուժին ալ կպարտի իր հարատևութիւնը կյանքի բոլոր տեսողութիւն, և համարութիւնը մաքառելու զովարութիւնը զեմ, ինչպես և կարելիութիւն՝ փորձութիւնը ալ դիմագրավելու:

Իր ձիրքերուն մեծ շահով օժանդակեց նաև ժուճկալութիւնը, զոր ցույց տվաւ իր կենցաղին մեջ: Արդարև ժուճկալութիւնը, որով ինքն իսկ կպարծենա հաճախ, կարելի գարձուց տոկուն մնալ միշտ ֆիզիկական, կուրծք տալ հողեկան հուզումներու, և մտքի հասակութիւնն ու աշխատելու տենչը միշտ անվթար պահել, երբ նույնիսկ ֆիզիկական ուժերը դավաճանել սկսեր էին արդեն իրեն:

Բայց ինչ որ իր մեջ կարծեքավորեր բոլոր ձիրքերը, իր նկարագրին անհատական շնչոված սիծն էր: Օրմանյան իր այս գի-

ծին կպարտի նախ ազգեցութիւնը, զոր ունեցաւ իր շրջապատին վրա և կնիքը: զոր իր ժամանակին վրա գրաւ: Այդ գիծն էր, որ, ինչպես պիտի տեսնենք, վարեց հանրային մարդը իր մեջ:

Սվ ավաղ, նույն այդ գիծն կուգան շատ մը բիծեր իր վրա, որոնք ավելի ևս պիտի սրեն հակակրօթիւնները զեպի ան, իր անհատական բուռն խառնվածքն էր, որ զինք շեղեցուց երբեմն ընդունված կարգն, ու զինք նշավակ դարձուց հարվածներու ալ:

Օրմանյան հաճախ պարծենցած էր, թե ցմիշտ Նավատարիմ մնացած է ուխտին, որուն հանձնառու եղաւ հոգևոր ասպարեկ մտնելու ատեն: Այդ ուխտը, զոր ան ըրաւ Անտոնյան միաբանութիւն մեջ մտնելու առթիւ, երբ դեռ հազիվ պատանի էր, սրբութիւնով պահեց հետագային ալ:

Հավանաբար իր այս հանձնառութիւններն ոչ մեկը այնքան սրբութիւնով չկիրարկեց Օրմանյան, որքան կամավոր աղքատ մնալու ուխտը: Օրմանյան կրնա արդարև պարծենալ, թե նյութը երբեք չսիրեց, սելութիւնը շահի իղձերն հետո մնացած եմ թե՛ ընկան բերմամբ և թե՛ նախնական դատարարութիւնով, — կըսե Օրմանյան, — և այս առաջնորդած է զիս Անտոնյան միաբանութիւն մեջ կամավոր աղքատութիւն ուխտագրութիւնը, այսինքն ոչինչ կրնալ սեփականելը: Այնպես որ այսօր ոչինչ լուսնիմ բացի գիրքերն ու գիրքերնս<sup>263</sup>:

Օրմանյան կըրցաւ ապացուցանել, թե նյութի մարդ չեղաւ, և այդ իր կյանքի բովանդակ տեսողութիւն: Նույնիսկ կարծես թե հետո կիսախեր նյութն:

Կրնար, խիղճը վաճառքի հանելով, նյութական պատկանելի դիրք մը ստեղծել իրեն համար, ինչպես պիտի ընեին ուրիշներ, եթե իր ազգեցութիւնը ունենային, կամ ինչպես ըրած են ոմանք, առանց նույնիսկ այդ ազգեցութիւնը ունենալու:

Ոչ ոք համարձակեցաւ ըսել, թե որն է առթիւ որն է կաշառք ստացած է ան, իսկ իր կողմե գործված զեղծումներու մասին պահ մը հրապարակ նետված առասպելները քանի մը օր միայն կըրցան դիմանալ, որովհետև Օրմանյան իր ստացած ու ծախսած բոլոր գումարներուն լրիվ հաշիվը իսկույն տվաւ, և անկե հետո ոչ ոք բերան առաւ նման առասպել մը:

Փառասե՛ր. ինչո՞ւ չըսենք, փառասե՛ր էր Օրմանյան, ինչպես որ ինքը ևս կըսե. հետո, փառասե՛ր ո՞վ չէ որ. բայց ամեն մարդ փառքը սիրելու իր կերպը ունի. ոմանց մոտ փառամոլութիւն հասած է արդեն ան, երբ փառքը միակ նպատակը կդառնա կյան-

<sup>263</sup> Տես՝ և խոսք, էջ 22.

քին. ուրիշներու քով հողեկան պարզ գոհացումն է հաղթանակի մը տարած ըլլալու. ոմանք իրենք կվազեն փառքին հտեան, ուրիշներու հտեան փառքը ինքն է որ կուզաւ: Ե՛րբայն թարոյական օգուտին,— կըսեն Օրմանյան,— այսինքն փառքին ե պատմիին, համարձակ ըսեմ, թէ անոր առջև անդգա չեմ եղած. և մինչև իսկ հրատարակութիւն մը ալ միտքս հայտնած եմ՝ թէ փառասիրութիւնը վատ իղծ մը չէ, և թէ փառամոլութեան տիրապետարարք է: Փառքը ստվեր է կոչված, և համամիտ եմ. բայց ստվեր չի գոյանար, եթէ իր մը լզտնվի. փառքը գոյացընող իր արդունքն է, արդունքին ստվերը փառքն է. ուղիղ է արդունքին հետևիլ, ուսկից փառքը ինքնին կգոյանա. սխալ է փառքին հետևիլ, առանց արդունքին հետևելու յոկ երեւութեան հետապնդելով: Ուղիղը փառասիրութիւնն է, սխալը փառամոլութիւնն է. այս է իմ քարոյական և իմաստասիրական տեսակետը, և այդ սկզբունքով առաջնորդված եմ պաշտոնավարութիւնս մեջ: արդունքն եմ քրած ինձի նպատակակետ. փառքն ու պատիվը, զոր վայելած եմ, անոր արտաքին հետեանքն է եղած, որուն համար առանձին փուլի կամ ճիգ չեմ ունեցած»<sup>254</sup>:

Արտաքինով՝ Օրմանյան հեռու էր պատկանք ազգելի:

Պատկանքը շատ անգամ մարդուն արտաքինն կրիսի. նույնիսկ շատեր կան, որոնք իրենց արտաքին գրավչութեան շնորհիվ կազդեն իրենց գիմացիներին վրա, մինչդեռ դատարկ են ներսն, իսկ իրենց շուքը շատ կարճ կտեսն: Ու փոխարեն որքան մարդիկ կան, որ զուրկ են արտաքին կերպարանք մը, և պետք է ճանչնալ զանոնք իրենց հոգեկան արժեքներուն մեջ, պատկառիլ սկսելու համար:

Օրմանյան սույն այս դասն էր: Ինչքան ճշգրիտ գծած է գայն Զօհրայ պժանոթի գեմքեր»-ուն մեջ.

«Մարմնական հազի գանգված մը, դեպի հտն շրջած քիչ մը. հնացող ու զժգոհ լանջ մը, որուն վրա վաղահաս այնորումով ճերմկած՝ առյուծի զլուխ մը ու զվարթ գեմք մը կհոխարտան. սրտաթունդ ու անուշ ձայն մը, որուն հայտնի անկեղծութեան շեշտը շիտակ սրտիդ կերթա ու կտիրե անոր. ձեռքի բուն շարժումներ, որոնք սպառնալից պիտի թվինք, եթէ դադարեին շնորհալի ըլլային և որոնք՝ խոսակցութեան մեջ բանիվ բերանի շփոթեցված մասերը ամբողջացնելու պաշտոնը կկատարեն:

Այս է արտաքին երևութիւնը: Ընդ առանձինը սպարանքներու բոլոր արվեստական շքեղութիւնը ներսն էր. հիմակ-

վան ճարտարապետութիւնը՝ շենքի դուրսի երեսին վրա կթափե իր բոլոր ճիգը, իր արվեստը, իր ճաշակը հոն ի տես կոյնն ու փուլի լըներ, որ ներսի պատերը անշնորհ կամ անպաճույճ երևան, հոս հանգած է բաղադրութեան հարատև ձգտումը. ամեն ինչ դուրսը: Գերաշնորհ Օրմանյան՝ հին ժամանակի ապարանքներն է. իր ներսը հմտութեան դանձր կան լեցված և հոն կառուցված ապարանք մը կա սրտի ու մտքի ամեն ճոխութիւններով, որոնք իր եկեղեցականի համեստ սքեմին տակ կծածկվին միշտ»:

Օրմանյան ինքզինքը հեռու չէր պահեր ժողովուրդէն. ընդհակառակը իր պտույտները թաղե թաղ՝ պատարագի ու քարոզի համար, տուններն ու հանդեսները՝ որոնց միշտ առիթ կստեղծէր, ժողովուրդին հետ միշտ շփման մեջ կպահէին զայն: Այնուամենայնիվ բան մը կպակսեր իրեն ժողովրդական դատնալու համար. հազորդական չէր. հակառակ իր ցույց տված պարզութեան, անընդհատ մը միշտ կար իր և ժողովրդական խավերուն միջև:

Համեստ էր Օրմանյան, բայց ոչ հազորդական, ժողովրդական դատնալ ամենուն տրված չէ. ոչ ալ բավական է արժանիք ունենալ՝ ժողովրդականութիւն շահելու համար:

Որքան բախտախնդիր մարդիկ կան, սրիւնակ, որոնք գիտեն ժողովրդականութիւն շահելու կերպը: Ու նաև որքան ամբոխավարներ, որոնք իսկույն կկախարդեն զանգվածը:

Ու փոխարեն մարդիկ ալ, որոնք իրենցմէ կխրայնեցնեն ուրիշները, չեն կրնար ամենուն ժպտիլ, բոլորը սիրաշահիլ: Կրսեն ինչ որ կմտածեն, չվախնալով նույնիսկ կոշտ ըլլալի իրենց անկեղծութեան մեջ: Օրմանյան այս վերջիններին էր:

Կուրջ գործի մեջ, բայց գիտե՛ր զուսպ ըլլալ ի հարկին: Ազկն էր իր շենքող ընավորութիւնը, որ կատակներով կհամեմներ իր խոսակցութիւնները, թէն այդ կատակները երբեմն մինչև հեզութեան կերթային:

Օրմանյան իր զուսպ ձևին մեջ կըքուտ էր ներսն: Եվ պետք է ըսել, որ նկարագրի իր այս գիծը եւ մաս կկազմեր իր սնահատական շեշտված խառնվածքին, որ մարդը երբեմն պաղարյուն կպահէր իշնամութեանց զիմ: Եվ ավելցնենք անմիջապես, որ այդ կիրքը զրուսպած է հաճախ կայնքի մեջ և զգուցացած է իր թշնամիներուն զիմ ելույթներ ունենալի, թէն այդ պաղարյունութիւնը չէ կրցած պահել իր օրերու պատմութիւնը կամ իր մտածումները զրի առած առնել: Իր երկերուն մասին խոսած առնել տեսնք, թէ ակզապատում»-ին և «Խոհ» և խոսք»-ին մեջ զեռ

<sup>254</sup> «Խոհ» և խոսք», էջ 28.

կհամենա կիրք մը, թեև անոնք զրված ըլլան իրենց պատմած գեպքերեն տասնյակ տարիներ հետո:

Բյուզանդ Քենյան, որ շատ մտտեն ճանշցած էր Օրմանյանը և անոր ամենեն չերմհիացողներեն մեկն էր հղած, կգրեր անոր նվիրված խմբագրականի մը մեջ, նույնիսկ տգեղ ցույցերեն անմիջապէս հետո. «Շարկ է նաև խոստովանիլ, թե Օրմանյան վերին աստիճանի ընկերային մարդ էր. իր խոսակցութիւնը հուշ հաճելի էր. կատարյալ կենցաղագետ մ'էր. ընտանեկան անթերի և անտղուտ կյանք մ'ունէր և իր անձնական բարոյական անաղարտ մնաց Բերայի ամենեն եռուղեւ կողմնին մեջ ընկեցուն հակառակ»:

Իր նկարագիրը լրիվ տված պիտի չըլլայինք, եթէ զանց ընեինք Օրմանյանի մեկ ուրիշ բացառիկ գիծն այլ՝ հակասութեանց մարդը իր մեջ, և մանավանդ իր բացառիկ ուժը բոլոր այդ հակասութիւնները իրարու հետ հաշտեցնելու: Իսկ այդ ուժը ուրիշ բան չէր, բայց եթէ կյանքի պայմաններուն կարենայ հաշտվելու իր ձիրքը, և իր շրջապատին համաձայն գիրք առնելու իր կարողութիւնը՝ իր անհատականութիւնը առանց սակայն զոհ տալու իր շուրջի պայմաններուն:

Օրմանյան ինքն իսկ կընդունի, թե իր կյանքը ուրիշ բան չեղավ, բայց եթէ ճշտ մը իրարմ տարբեր ու իրարու անհարիր շրջաններու համախմբութիւն մը, անկապակից տեսութեանց միավորութիւն մը, և փոխադարձաբար անկախ գործերու գումարում մը: Ես իսկ վարանոտ անուշադրութեան մեջ կգտնվիմ, երբոր կուզեմ ճշտել, թե ի՛նչ հղած է կյանքիս տիրող նկարագիրը: Ո՛ւր Անտոնյանց վանքին երկնուղծ ու բարեպաշտ ուսանողը, և ո՛ւր Վատիկանի դեմ պայքար մղող հաստատամիտ գործիչն ու գրիչը: Ո՛ւր հռոմեական գրութեան ջատագով աստվածաբանը, և ո՛ւր հակահռոմեական աստվածաբանութեան հոռոգուն ուսուցիչը: Ո՛ւր եվրոպական ոստաններու մեջ հանգստավետ կյանքով ապրողը, և ո՛ւր Հայաստանի անկոթ լեռներն ու անշէն ձորերն ու շինական խրճիթներուն մեջ զվարթամիտ թափառողը: Ո՛ւր պահպանողական սկզբունքներով սնած ու գործած աշակերտը, և ո՛ւր ազատամիտ ու լայնախոհ սկզբունքներու հետևողն ու պաշտպանողը: Սակայն իրականութիւն մըն է, որ այս ամենն այլ ճշմարտված են իմ կյանքիս մեջ, և իրարու ներհակ ծայրերու ծառայելով մեկտեղ ո՛չ ինքնութիւնս եմ կորուսած, և ո՛չ իսկութիւնս շփոթած, ո՛չ անբազանաց հան-

դիպած, և ո՛չ վարձացմանց տեղի տված, այլ միևնույն և ինքնիրեն համաձայն անհատականութիւնս եմ պահած»<sup>255</sup> ք:

Տարբեր գիրքերու վրա նույն մարդը մնալու այս վարժութիւնը հիմնական գիծերեն մեկը կազմեց Օրմանյանի նկարագրին, և զայն բնորոշակ գարծուց գիրք բռնել պարագային համամատու Վարտայաց, պահանջից և պատշաճից հպատակիլ կանվանեց Օրմանյան այս ճարտարութիւնը, և զայն գերագույն իմաստութիւն կսեպել, մինչ ուրիշներ կեղծիք պիտի նկատեին զայն պարզապես: Այդ ճարտարութիւնը, զոր կիրարկած է մինչև վերջ, Հռոմի տարիներեն կուզա իրեն, երբ առանց համոզված ըլլալու, միջնադարւան հավատաքննութիւնը պաշտպանած է եկեղեցական պատմութեան քննութեան ատեն, իսկ պապական իշխանութեան ջատագովականն ըրած է, առանց նույնպէս իր ըմբռնումն ըլլալու, աստվածաբանական մագիստրոսութեան քննութեան պահուն, և երկու քննութեանց մեջ այլ շահած է մրցանակը:

Շահեկան է սակայն գիշը կարդալ. «Ենթահաս կամ լավ ևս տհաս աշակերտութեանս ժամանակ տեսածիս հետեւելով և թելադրվածին համակերպելի տարբեր բան մը չէի կրնար ընել, և խղճտութեամբ վարեցի այդ դերը օրինակելի ճշտապահութեամբ: Կրտսեկան սկզբունքներս, դավանական ըմբռնումներս, գործնական արարքներս միևնույն ուղղութեան վրա պահեցի. տարբեր համոզում չէի կրնալ ունենալ, տարբեր ընթացք այլ պետք չէր որ ունենայի: Զափահաս աշակերտութեանս և հետախույզ ճիգերուս մեջ գտնուած զավանանքս սկսավ զիս շոգհացնել, հռոմեագրական սկզբունքներուն հիմերը սկզբան տկար երևնալ, գործածված փաստեր կամայականութեան ձևեր և՛ այլալուստեան իմաստներ սկսան ցուցնել, բայց տակալին իմ վրա չէի զգար այնչափ հեղինակութիւն և այնչափ փորձառութիւն, որ կարենամ կացութիւնը հուզել և խզել: Եկեղեցական պատմութեան մրցակից քննութեան մեջ միջնադարյան հավատաքննութեան պաշտպանութիւնը նյութ տրվեցավ, այնպէս պաշտպանեցի՝ որ մրցանակը տարի, թեպետ համոզումս լիուրի չէր: Աստվածաբանական մագիստրոսութեան մեջ պապական իշխանութիւնը այնպէս պաշտպանեցի՝ որ հռոմեականներն այլ դարձացի, թեպետ ըմբռնումս համաձայն չէր: Սակայն համալսարանական ծրագիրը այս էր և ես այս ծրագրին հետևած էի

255 «Ենթա» և խոսք», էջ 457:

և ուսումնական իշխանությունների հեղինակության դիմ ըմբոստանալու ոչ պարագայք կենդանի և ոչ օրինավորությունը կթուլլատրեր:

Պարտյաց և պահանջից և պատշաճից հպատակիլը զհրազույն իմաստությունն է, ուսկից հրրեք բաժնվիլ շեմ ուղած<sup>256</sup>:

### 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԿՈՐԾԻԳԸ

Ամենն շահեկան դիժն է Օրմանյանի մեջ հանրային գործիչը, որովհետև ամենն բնորոշիչն է իր գործունեությունը այլազան և բնույթներուն մեջ, և միևնույն ատեն ամենն փշոտ գետինն է Օրմանյանի կյանքը պրպտողին համար, որովհետև հոն է, որ կրախին հակասությունները:

Հայ ժողովուրդը հոռի սովորություն մը ունի՝ մարդիկը հեռացնել իրենց կուումեն... Պրպտեցե՞ք հայ ժողովուրդի պատմությունը, աչք մը պտտուցե՞ք մանավանդ ձեզի մտտիկ շրջաններուն վրա, ու պիտի տեսնեք՝ որ կյանքը հեռացուցած է շատերը ուսուցիչներու ձեռքը տալով Հայկական դատը, դիվանագետի վերածելով բանաստեղծները, ու փոխարեն հասարակ վարժապետի փոխարկելով մարդիկ, որոնք պիտի կրնային բարիք բերել հայ ժողովուրդին տարբեր ասպարեզներու վրա:

Հայ կյանքի րացատիկ պայմանները Օրմանյանը ևս շեղեցուցին քանիցս իր նախնարած ասպարեզեն, որ գրականությունն ու մանավանդ ուսուցչությունն էր, բայց իր խոստովանությունը:

«Բնական բերմամբ վարչական գործերու սիրահար շեմ եղած, — կորն Օրմանյան, — և ուսումնական ու գրական աշխատանքների նախագասած եմ, նույնիսկ անհատական առավելությանց տեսակետեն, դի գրական արդյունքները մշտնջենական հիշատակ կթողուն, մինչ վարչականներ ասպաշնորհ հետաքննելու կարտագրեն: Ասով մեկտեղ մտադուր հանձն առի վարչական պաշտոններ երբոր օրինավոր և պարտավորիչ կերպով ինձի տոջարկվեցան: Իրն հաստատուն կանոն բրի ինձի ոչ մի պաշտոնի հետամուտ բլլալ և ոչ մի պաշտոնի խուսափիլ»<sup>257</sup>:

Արդարև, Օրմանյանի համար խորթ ասպարեզ էր եղեր Կարևո առաջնորդությունը. նախ, զոր ստանձներ էր հազիվ մտած հայ կյանքի սեմեն, ինչպես պիտի բլլար հետագային Պոլսո պատրիարքությունը ևս, որուն պիտի կոչեին զինքը, բնագատելով իր գործունեությունը:

Վարչական այս պաշտոններուն մեջ էր առավելապես, որ հանրային մարդը աչքառու պիտի դառնար իր մոտ, որովհետև այդ

պաշտոններուն առթիվ էր, որ շփման պիտի մտներ հանրության լայն խավերուն հետ:

Ինչպես առաջ այ բարեք, Օրմանյանի նկարագրին ամենն բնորոշ կողմը անհատական դիժն էր իր մեջ, որ բնավորության բոլոր մյուս գիծերը, և անոնց հետ նաև իր բոլոր թերությունները, իր շեշտված անհատականություններն կբխեն: Այդ գիծը տիրական մնաց հանրային մարդու մեջ իր:

Սի հետևաբար անոնք, որ հանրային մարդը կդատեն Օրմանյանի մեջ, պետք է նույն այս գիծեն մեկնին անոր գործունեության մեջ վրեպներ ևս փնտոտելու ատեն: Առանց իր բնավորության այս շեշտված գիծին, հավանաբար իրեն վերագրված վրեպներն շատերը չունենար ան, և անշմարանցեհին իր վրա շատ մը բիծեր, գոր ամեն մեկս ունինք և որոնք ավելի ցայտուն կերևան սակայն ուժեղ մարգոց վրա:

Սի նույն այդ գիծն էր, դարձյալ, որ շատերը խրտչնցուց իրմե, անջրպետ ստեղծեց իր և ուրիշներու միջև և դժգոհներ ստեղծեց իր շուրջը: Անկե կուզան հետևաբար հակակրթություններն այլ, զորս սկսավ քաղել և որոնցմե շատերը թշնամության պիտի փոխվեին հետու:

Այնպես որ իր այդ շեշտված անհատականությունն էր, որ կմղեր զինքը տիրական դիրք մը որդեգրել՝ բոլոր այն պաշտոններուն մեջ, զորս կուղված էր վարել, և մանավանդ իր պատրիարքության ռասնեկրկու տարիներուն:

Մենատիրությունը րադձանք կոչենք իր այդ բնավորությունը թե կամքի մեջ համառություն, Օրմանյան չափազանցության տարած էր զայն. ու ճիշտ աղոր կպարտի թշնամությունները, զորս քաղած է ան, և որոնք հայածանքի պիտի փոխվեին, հր ինք իչներ իր դիրքեն:

Տեսակ մը խոստովանություն է որ կրեն, եր կրս հանրային մարդուն դերը ճշտելու առթիվ. «Առաջին պայմանը ինքնիր գործին տեր բլլայն է: Գիտեմ, որ սահմանադրական և խորհրդակցական դրությունը պաշտոնի զուխ գտնվողները կպարտավորն յուրովի և աղեկամի շգործել, այլ ո՛չ թե իր ինքնությունը ուրանալ: Ընդհանուր կարծիքը դուխ գտնվողը պատասխանատու կհանչնա և ձախողվածի առթիվ կմեղադրեն, ուստի՛ դի-

257 «Երեւոթ և խոսք», էջ 15:

258 «Երեւոթ և խոսք», էջ 458:



տեսութիանց ներհակ գործունեության ապարեզ տվին<sup>261</sup>։

Քե Օրմանյան ամեն բան իր ձեռքին մեջ էր կեղրոնացուցած, այդ իր բարեկամներն ալ կրնգունին։ Բայց այդ կվերադրեն այն բանին, որ ձեռնհաս մարդիկ իր շուրջը չկային, իսկ եթե կային, գործերուն փարած էին մատին ծայրով։ Օրմանյան ստիպված էր հաճախ ինքն ընել բոլորին ալ գործը։ Բյուզանդ Քեչյան այդ բանին ակնարկելով կգրեր. «Ամեն բան ինքն էր, և ինչպես որ Լուի ԺԴ ըստով L'état c'est moi (Սա ինքս եմ տերությունը)», Օրմանյան ալ ավելի իրավամբ կրնար հայտարարել, թե «Սա ինքս եմ պատրիարքը, Պատրիարքարան, Կրոնական ժողով, Քաղաքական ժողով, Տնտեսական խորհուրդ, Ելեմտից հոգարարություն, Գատաստանական խորհուրդ և Ուսումնական խորհուրդ»։

Գարրիին նորատունկյան, որ ամբողջ 12 տարի Օրմանյանի հետ գործեր էր առանց սակայն անոր կողքին մնալու ջրավություն պահուն, բսեր էր «Մշակ-ի թղթակից Սարուխանի»։ Օրմանյան վերին աստիճանի աշխատասեր մարդ էր. նա հողենի չգիտեր։ Պատրիարքարանի բոլոր գործերին համարյա թե միայն ինքն էր ուղղություն տալիս. ոչ մի գրություն դուրս չէր գար Պատրիարքարանից, մինչև որ նա կանխավ տեսած և սրբագրած չլիներ։ Նա ետանդուն էր թե՛ խոսելու և թե՛ գործելու մեջ»։

Հանրային մարդը Օրմանյանի մեջ կրնորոշվի նաև իր ստոնսարտությունը և պաշարյունությունը։

Օրմանյան արդարև զգացումի մարդ չէր։ Ան կզավաներ, որ վարիչ մարդը պետք չէ զգացումներն տարվի։ Ընդհակառակը զգացումը թիրություն մը կզավաներ պատասխանատվություն ստանձնող մարդու մը համար, որ պարտավոր էր ամուր ջիղեր ունենայ, շուտով շնորհվեր ու շխանդավառվեր, ու շուտով ալ շնուսահատեր ու շմքեր։ Վարչական մարդը, իրեն համար, պետք է պողպատե շինված ըլլար՝ շաղկվելու համար ոչ սպառնալիքներեն, ոչ ալ արցունքներեն, ոչ վախնար, ոչ ալ փղձկեր։

Հիմա լսենք Օրմանյանն ալ. «Ավելի ծանր գիտողություններու, առիթ տվավ սիրտի խնդիրը, մինչև իսկ հոշակելով, թե Օրմանյան սիրտ չունի։ Սիրտ անունը երկու իմաստով կգործածվի սովորական խոսակցություն մեջ, երբեմն իբր կարոլ և երբեմն իբր զօրով։ Իբր կորով կնշանակի զծվարությունը զեմ արխանալ, վտանգներու զեմ խոյանալ, արգելքներու զեմ քաջանալ,

և այդ իմաստով կառնվի սրտառ, տյսինքն սիրտ ունեցող անունը։ Իսկ իբր զորով իմացված ատեն կնշանակի զգացումով առատանալ, ախուժախեր խոսիլ, արգահատանաց բացատրություններ շոսյլել, երբեմն ալ կեղծ ու իրավ արտասվել, և ասանկ են բուխսիրտ կույվածները։ Իմ սիրտ չունենալը առաջին իմաստով աննել հնար չէ, դի դժվարություններու հանդեպ և սպառնալիքներու ներքև տասվերկու տարիներ պաշտոնիս վրա անհողզող մնալս բավական է զիս արգարացնել, նյութական ոչ մի առավելություն չվայելելով մեկտեղ, իսկ երկրորդ իմաստին գալով, մարդ զգացումի հետ միտք ալ ունի, և յուր դերագույն ձիրքը միտքն է, իսկ զգացումը անբաններու ալ հասարակ է։ Արդ պահանջել, որ մարդը զգացումով առաջնորդվի, զայն ստորացնել է և ոչ թե բարձրացնել, և իմ համոզմամբ կատարելագույն է մարդը որ միտքով, խորհրդածություն մը և կշռադատություն մը կառաջնորդվի, և պատահական զգացումը իրեն ուղեցույց և կանոն չընդունի, երևույթով չի խարվիր, ամեն ցույցի դուրսով ականց յի կախեր։ Կրնգունիմ որ եղեր են պարագաներ, որոնց մեջ աղայանքներ, պաղատանքներ, թախանձանքներ, արտասուքներ ինձի իբրև փաստ երևցած չեն խնդրանք մը կատարելու, երրորդ գործին պարագաներ և մասնավոր տեղեկություններ, և հետապնդյալ զընություններ անոնց արգարացի ըլլալը չեն հաստատած, և հետևաբար անոնց ընթացք ալ չեմ տված։

Այս պարագաներու ներքև ավելի արգար էր ինձի համար ըսել, թե զգացումներով կառավարվող մը չէ, թե միտքի կշռադատությունաց համառ հետևող մըն է, և ոչ թե բսել, թե սիրտ չունի»<sup>262</sup>։

Եվ անմիջապես կավելցեն սակայն, թե զեպքերուն առջև շնորհվի չի նշանակեր անտարբեր մնալ կարիքներուն առաջ ալ, և թե ինքը երբեք ալ անկարեկիր գտնված չէ Ազգին ցավերուն հանդեպ. և իբրև ապացույց կհիշե նպաստի գործը, զոր կազմակերպեց ժողովի ղեկավարակ իր անձնական նախանձախնդրությունը»<sup>263</sup>։

Օրմանյան որքան պաղարյուն և սառնասիրտ՝ նույնքան ղույն և խոհեմ էր գործի մը ձեռնարկած ատեն, Երկար կշռելն հետո միայն քայլ կառներ, համոզված որ բազմաթիվ ձախողվածներ հետևանքն են հախուռն քայլերու։ Իր այդ զգուշավորությունը սպասկարացատրե ինքը՝ սիրե՛լ գործ մը ներկայացած կամ որե՛ւ ձեռնարկ մը սկսելու ատեն, ուշի-ուշով քննել նախընթացն ու պարագա-

<sup>261</sup> «Յոհն Ե և խոսք», էջ 31—32.

<sup>262</sup> Անդ, էջ 26—27.

<sup>263</sup> Անդ, էջ 27.

նեոր, նպատակոր և աննպատ փանգաները, հաջողութիւն և ճախողութիւն մանքները, հաջողութիւն և ճախողութիւն կշիռը, և այնպես գործին ձեռք զարնել, ելքը անհավանական և հաղորդութիւնը անստույգ ձեռնարկները գորշանալ, ինքզինքը ճախողութիւն վտանգին հնարավոր շահով հետու պահել: ... Ոմանց տեսակետով այս ընթացքը վախկոտութիւն, թուութիւն, ապիկարութիւն, կկարծվի, և ետևը առջևը շղթանով գործի ձեռնարկողներ աշխույժ, արի և գործունէյա կդատվին: Իմ փորձառութիւնս հակառակը կհաստատուի: Հախուռն և անկշռադատ ձեռնարկներ պարզապես անիմաստ ընթացք են, որոնց հետևանքները ձեռնարկողին վրա կծանրանան, իր գործունէութիւն մեջ ճախողելը պատիկութիւն կրերն գործողին վրա, հաղթանակի առավելութիւն կուտա գիմացինին, դուրսով մերժվելու գուռ կբանա, պատիվը կնվազեցնեն, հարգն ու վարկը կվտանգեն, որ է ըսել՝ բարոյական առավելութիւններն կկապտեն գործողը, որ նյութական առավելութիւններն գերագույն կշիռ ունի գործիչներու համար»<sup>264</sup>:

Իր գորշը բնավորութիւն հետ, Օրմանյան համառութիւն ալ ունեւր սկսված գործ մը լլքելու կես ճամբան և զայն հասցնելու իր ցանկացած վախճանին: Ընդ տ է, հաճախ կգոհանար կիսամիջոցներով, և պատիկ բավարութիւն մը հաջողութիւն կսեպեր, բայց շէր կասեր արդիունք մը ձեռք չձգած:

Օրմանյան սակայն հուսահատիլ ևս չէր գիտեր ճախողութիւնց ատեն, ինչպես շէր սիրեր ձեռնթափ ըլլալ ղժվարութիւնց առջև:

Ուրիշներ, իր տեղը, դասալիք պիտի ըլլային շուտով խութերու հանդիպած ժամանակ ինք կտոկար մինչև վերջ: Աղկն նաև իր անհողողը կեցվածք իր պաշտոնին վրա, հակառակ բոլոր այն ղժվարութիւններուն, զորս արքունիքը և պետական ուրիշ մարմիններ անընդհատ կհարուցանեին իր գործունէութիւն առջև, և հակառակ նաև իրեն տրված խորհուրդներուն ու մինչև իսկ սպառնալիքներուն, որպեսզի պաշտոնեն թաշվի:

Իր պիտավոր պատճառարանութիւնն էր, թե Ազգը գործ մը կհանձնեն մեկուն, որպեսզի զայն վարեն, ոչ թե անկէ հրաժարել:

«Ինչ համոզմամբ և սկզբունքով պատրիարքութիւնը ստանձնեցի,— կրսն Օրմանյան,— նույն կերպով ալ զայն պահեցի տասվերկու տարին: Ինձի նվիրական պարտք համարելով Ազգը բնտրողական տաղնապի լմատենել, և կամ անտերունչ մնալու վիճակին շնթարկել»<sup>265</sup>:

Այդ տրամարանութիւն մը էր, որ համառեցավ ան իր պաշտոնը լլքել, և ղժվար տեղի տվավ նույնիսկ այն պահուն, երբ եկեր էին հրաժարական պահանջելու ցուցարարները և երբ զինք կլքին իր իսկ գործակիցները:

Ան կզգուշանար միևնույն ատեն ծայրահեղ պահանջներ, և ինչպես կրսն, երկու ծայրերուն մեջ միշտ միջին կետը կփնտոներ: Այս կերպով ոչ ղիմացինը կխրտչեցներ, և ոչ ալ պարտված դուրս կուգար: Նման քաղաքականութենն մը օգուտ մը միշտ ապահով կգտներ, ինչքան ալ ղույզն բլլար ձեռք ձրգվածը, բայց փոխարեն վնասի մը հավանականութիւնը ևս անհետացած կբլլար:

Օրմանյան երբ կպարծենա, որ ոչ ոք կըրցավ ցույց տալ, թե իր գործունէութենն որեէ վնաս եկած է Ազգին, և որ իր ղեմ ուղղված ամբաստանութիւնները ընդհանուր խոսքեր էին միայն, կրսն նաև. «Իսկ ասոնցմն դուրս լսվածներ պարագայից համեմատ վարվելու պարտավորութենն կծագին, որ խոհական ղերզգոնութիւն կկուլի, հնարավորով զոհանալ երբ հնար չէ քացարձակը ձեռք ձգել, շահիլ երբ հնար չէ զսպել, ղարձնել երբ հնար չէ ղիմարել, մինչև իսկ կարասին ծով նետել նավը ազատելու համար»<sup>266</sup>:

Օրմանյան միևնույն ատեն կարծես կհավատա, թե նպատակը կարդարաղեն միջոցը: Իրեն համար երբեմն կարևորութիւն շունին ճամբաները, բավական է, որ իր ուզած տեղը տանին, Մեթոդ մըն է այս, որ գուցե Հոռոմեն կուգա իր հետը և որ եթե երբեմն հաղթանակի կտանի մարդս, սակայն հաճախ ալ կսայթաքեցնեն: Կարպետ Տերութիւն մտուսնալուծման խնդիրը, օրինակ, հաղթանակ մը շեղավ իրեն համար, թե ևաշողեր էր Ազգին կտակ մը ապահովել:

Օրմանյան, գործի մեջ, անհատական շահերու ասպարեզ չէր տար, երբ հանրային շահերն էին խնդրո առարկա: Այդ սկզբունքն առաջնորդված, հաճախ մերժած է անհատական ղիմումներ, և կկարծեն, թե հետագային իր ղեմ հարուցված ղժգոհութիւններն զատերը իր այդ վերաբերումին հետևանքն են:

«Ուրիշ գործնական սկզբունք մըն ալ ըրած եմ ինձի,— կգրն Օրմանյան,— մասնավոր և անհատական գործերով ինքզինքս շատ լծանրաբեռնել, երբ ընդհանուր և հանրային գործեր կան կարողողվելիք: Անհատական գործեր ավելի նպաստավոր են անձնական շահերու, ղժվարաններ պատրաստելու, երևութիւններով փայլելու, և գործի ղուլի գտնվողներ ղլուրավ կտահին այդ կողմը:

<sup>264</sup> «Խոհ» և խոսքս, էջ 25:

<sup>265</sup> Անը էջ 18:

<sup>266</sup> «Ազգայնաստուծ», Գ, էջ 5416—5417:

Սա աշխատեցա որքան հնար է, այդ սայթա-  
բումեն զգուշանալս<sup>267</sup>։

Օրմանյան ձևակերպությանը մարդն էր  
նաև։ Ան կրթման կկարծեք, որ ձևերը փրկե-  
լով ողին ալ փրկած կըլլար մեկտեղ։ Ան  
կարծեց, օրինակ, Սահմանադրութիւնը կի-  
րարկած ըլլալ, իրենց պաշտոնը վալուց ա-

վարտած երեսփոխանները երբեմն հավաքե-  
լով և անոնց տեղեկութիւն տալով Ազգին  
գործերուն մասին, Վատ բան չէր ուրիշները  
ևս տեղյակ պահել իր գործունեութիւն, բայց  
պետք էր նկատի ունենար, որ այդ ուրիշնե-  
րը այլևս Ազգային երեսփոխանական մոդով  
չէին։

### 3. ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ

Հոգեորականը փնտոել հոգեորականի մը  
մեջ՝ անհեթեթ կթփի ինքնին։ Բայց անհրա-  
ժեշտ կդառնա, երբ պարագան Օրմանյանինն  
է, Անհրաժեշտ էր գիտնալ արգարև, թե ինչ-  
պես կեներկայանար հոգեորականը գիտնա-  
կանի մը մոտ, որ եկեղեցական ու կրօնա-  
կան հարցերու այնքան ուսումնասիրութիւն-  
ներ է նվիրած և հավատքի մարդը ուսուցչի  
մը մոտ, որ հոգեորականներու սերունդ մը  
հասցուցած է։

Ըսենք ամենեն առաջ, թե իրև հոգեորա-  
կան Օրմանյան անթերի կատարած է իր կո-  
չումին հարկադրած բոլոր պարտականու-  
թիւններն ու ձևակերպութիւնները, սկսելով  
Անտոնյանց մոտ իր նորրնծայութենէն։ Ուր  
ալ գտնված է և ինչ պաշտոնի ալ վրա, եկե-  
ղեցական պաշտունքն չէ խուսափած բնավ,  
վանքերու մեջ գտնվիր պաշտոնով, թե վար-  
չական դրաղումներու մեջ, եկեղեցի հաճա-  
խած է անվրեպ, եթե առանձնացման իր  
տարիներուն հետո մնաց եկեղեցական արա-  
րողութիւններն, այդտեղ արդեն մեղավո-  
րը ինքը չէր, Ամբոխն էր, որ պատարագելե  
արգիւնց գայն քանիցս։

Օրմանյան եկեղեցիէն յրացակայեցավ  
նույնիսկ իր ծերութիւն օրերուն, երբ Երու-  
սաղեմի վանքը կմնար, այլևս գրեթե ան-  
պաշտոն։

«Եկեղեցական պաշտամանց անպակաս էի  
առտու և երեկո՝ կանուխ երթալու և լվերջա-  
ցած շնչալու պայմանով, — կգրե Օրմանյան։  
— Որովհետև վանքին մեջ Զիլինկիրյանն  
գատ եպիսկոպոս չկար, և ան ալ առանց փո-  
խարինութիւն աշխատանքներու հետամուտ  
չէր, գրեթե հաստատուն հանգիստպետը  
կըլլայի նախատնակներու և առյաններու,  
թափօրներու և զնացքներու, որոնք Երուսա-  
ղեմի մեջ հաճախ ու երկար են, և իրավուն-  
քի պարագաներ պարունակելուն՝ անտնօրի-  
նելի պարտավորիչ են»<sup>268</sup>։

Այնպես որ կրնանք վճռապես ըսել, թե  
Օրմանյան երբեք լթերացավ բոլոր այն ձե-  
վակերպութիւնց մեջ, զորս կհարկադրեք  
իրեն սքեմը։

Բայց ըսենք նաև, թե Օրմանյան հոգեորա-  
կանութիւնը ասպարիզ կնկատեր և ոչ թե  
կոչում։ Ասպարեզը, արդարև, առաջելու-  
թիւն մըն է, զոր մարդ կընդգրկե գիտակ-  
ցորեն, համոզումով, ինքն իր կամբովը, մինչ  
կոչումը կենթադրե նախասահմանված ըլլալ  
այդ առաջելութիւն, և օժտված ըլլալ իրն  
որոշ ձիրքերով հատկապես այդ առաջելու-  
թիւն համար։ Արվեստագետի ձիրքը կոչում  
մըն է, օրինակ, Իսկ մարդիկ հոգեորական  
կդառնան, ինչպես պիտի նվիրվեին հանրա-  
յին ուրիշ ասպարեզի, Հավատքը դեր չի խա-  
ղար հող, Որքա՞ն հավատացյալներ կան, ո-  
րոնք սքեմ չեն կրեր։

Օրմանյան, սակայն, հավատացյալ մըն  
էր։ Ոչ թե անոր համար միայն, որ աչքը վան-  
քի մեջ բացավ և կրօնքն եղավ իր անդրանիկ  
անունդը, այլ որովհետև հավատքը անհրա-  
ժեշտ գտավ, երբ արդեն իրերը սառն գիտե-  
լու տարիքին հասած էր։ Բայց սխալ պիտի  
ըլլար անոր հավատքը շփոթել, քրիստոնեա-  
կաններն անգիր սորվված բանաձևերու հետ։

Օրմանյան ինքը կուզա խոստովանելու,  
թե բրածո, քարայցած համոզում մը չէր իր  
հավատքը՝ «Եխտուովանիմ, թե կստեի, եթե  
հավատքի ու գիտութիւն յոին պայքարը,  
որ ներկա դարուս հրապարակի վրա ալ  
կմղվի, իմ վրաս ազգած չէ բսեի, Որչափ ալ  
ուսմանց ընթացքս և դաստիարակութիւնս  
կրօնական ուղղութիւնը եղած են, այսու-  
մենայնիվ թե՛ ուսմամբ, թե՛ ընթերցանու-  
թեամբ, թե՛ հարաբերութիւնը և թե՛ մոտեն-  
չմամբ, արտաքին գիտութիւնը և պատ-  
մական հետադոտմանց ու ներկա զարուս  
ուղղութիւնց օտար մը եղած չեմ, իմ միտքս  
ալ ընկճված է դավանական խորհուրդներու  
ծանր բեռներուն ներքև, իմ տեսութիւններս  
ալ զգածված են անիմանալի մթութիւն առ-  
չել։ Բայց մտախոհ զգուշավորութիւնը և  
հանդարտ խորհրդածութիւնը կըցած եմ  
միտքս հանդարտեցնել, և ներքին խաղաղ  
մտայնութիւն և կացութիւն մը կազմել, Այդ  
մասին իմ միտքիս վրա մեծապես ներգոր-  
ծած են ընական կամ նյութական աշխարհի  
գաղտնիքները, որոնցմէ դուրսով բարձրա-  
ցած եմ գերբնական և հոգեկան զաղտնիքնե-  
րու իրականութիւն։ Երբորդութիւն խորհուրդն  
յսկ անմարսելի և անտանելի լիմ գտած,

<sup>267</sup> «Երեւոյթ և խոսք», էջ 26։  
<sup>268</sup> Անդ, էջ 333։

բայց մարդեղութեան և հաղորդութեան խորհուրդները ավելի ճնշած են միտքս, աստվածային բնութեան հետ համաձայնեցնելու ղօժվարութեան կողմեն: Այսուհանդերձ աւոր հպատակիւս ալ դուրացած է, քրիստոնեութեան վրա ունեցած բարձր և զորավոր, իսկական և ճշմարիտ համոզմանս ուժով, զի երբ հիմ մը հաստատուն է, անոր շնքն ու մասերը խարխուլ չեն կրնար ըլլալ: Այս համոզմանս շնորհիվ կրցած եմ ոչ միայն լավ հավատացյալ մը, այլ և աստվածաբանական ճշմարտութեանց լավ ուսուցիչ մըն ալ ըլլալ: Հետի մնալով միշտ հոռմեղացական գրութեան լափազանց-յալ և մենամուտ տեսութուններն, և հիմնով-լով հայադավան լայնախոհ և ներողամիտ գրութեան վրա, ինչպես գործերովս ալ ապացուցած եմս<sup>266</sup>:

Ետ քիչ անգամ հոգևորական մը այսքան ճարտար կերպով կրցած է իր հավատքը հաշտ ցույց տալ գիտութեան վճիռներուն հետ: Երբ ինչ, հայ դավանանքի լայնախոհ և ներողամիտ գրութեանը» օգնութեան կհասնի իրեն, բայց ինքն ալ կրցած է մոլեռես-դութեանը քանդել իր մեջ, հիմքին հավատալ ու գերի լզառնալ մանրամասնութեանց:

Շեշտաբան անհրաժեշտութեան համոզումը, — կրսե Օրմանյան, — կթաղմ մարդկային բնութեան իսկ իր կազմակերպութեանը լրացնելու համար հավատքի պետք ունենալին քնական և կենցաղական շրջանակին մեջ, Հավատքին պակասութեանը ահագին դատարկ մը կձգե մտաւիրական բնութեան մեջ, և որովհետև գիտութեանն ալ կընդունի, թե բնութեանը դատարկե կխորշի, անկե կհետեցնեն, թե հավատքը անհրաժեշտ պետք մըն է միտքին դատարկը լրացնելու: Այս տեսակետն մեկնած, ղօժվար պիտի լըլլար իրեն համար բացատրել և աղոթքը: Շեշտաբան լափ, — կրսե ան, — և թերևս հավատքն ալ ավելի զորավոր եղած է հույսի վրա համոզումս, այն հույսը, որ աստվածային նախախնամութեան և հովանավորութեան սկզբունքը կազդե մարդուն: Այդ ազդեցութեանը է, որ ան Աստված դիմումը և հայցվածը, կամ սովորական բառով աղոթքը, անկեղծութեամբ և համոզմամբ կիրարկած եմ ամեն պարագային: Ամեն գործի սկիզբին կամ ընթացքին, ամեն դժվարութեանց հանդեպ, առ Աստված դիմումը հաստատուն սովորութեանն եմ ըրած պատանեկան տարիքս ի վերս:

Գեղեցիկ է հետմահու այս անկեղծութեանը: Մինչդեռ ոմանք սքողած են իրենց թերահավատութեանը ու միշտ գերին մնացած ձևերուն և մանրամասնութեանը, կամ երբ

ուրիշներ հավատքին մեջ անբարեբանի բաները միտքիկ գեղեցկութեանը մշուշին են հանձնած, Օրմանյան կուգա ուրույն համոզումով մը, որ տարակույսը կվանն:

Ձեռնապ, ՎՄանոթ դեմքերու-ու շարքը մտնելու առթիվ Օրմանյանը, սա տողերով կընորոշե հավատքի մարդը Օրմանյանի մեջ. «Շեշտաբան մը կա՝ որ անզգալար կտիրե վրագ. կարծես թե անուշադիր մեկ վայրկյանեզ օգուտ կթաղե ներս սպրդելու ու հոն հաստատվելու համար. ավելի կսահի քան թե հայտնի կերպով կմտնե: Իրեն քարոզածը՝ հակառակն է ասոր. պայքարիկ ու բարձրախոսիկ քան մըն է, որ իր զարուստը կանխավ կիմացնե, իր սեփական ուժին կհենու ու հաղթական մուտքով խղճմանքներն ներս կմտնե. անոր համար որ համոզումի արդունք է, Հավատք, ո՛չ ապացեն մարդկային իմաստութեանը ուրիշ եզրակցութեան մը չի գար և աստանդական մտքերու համար՝ որոնք անմատչելի բեռնի մը վրա ոտք կոխելու հույսով կմոլորին, նորեն ան է վերջին ու անքույթ նավահանգիստը: Այս պատճառով է, որ գերաշնորհ Օրմանյան աղաչավորի ու վեճե խուսափողի ձևեր շտանը երբ կրննքի վրա կխոսի: Ոչ պատմութեանը կշփոթեցնե զինքը և ոչ գիտութեանը. ընդհակառակը անոնցմե է, որ կթաղե իր փաստերը ու իր զենքերը կաննե. ամենն նորահամար ապացուցներ անծանոթ չեն իրեն, ու բանակովի մեջը չի նմանիր այն եկեղեցականներուն, որոնց բոլոր համոզումի միջոցները՝ վաղնջական ժամանակներն մնացած փաստեր են, որոնք նորերու դեմ հանվելով՝ առջի վայրկյաններն կփշրվին»<sup>270</sup>:

Օրմանյան հոգևորականին մաս կկազմեր իր կապը Հայ Եկեղեցվու հետ: Մեր ընթերցողները ծանոթացան հոգեկան այն բեկումներուն, զորս Օրմանյան կրեց իր ներսը, երբ կաթոլիկ Եկեղեցվու վերարկուն էր դեռ վրան ու պայմաններուն, որոնք զայն Հայ Եկեղեցվու գիրկը բերին: Այս պահանջն սկսյալ մինչև իր մահը, մոտ քառասուն տարի, Օրմանյան չբժմորին փարած մնաց Հայ Եկեղեցվու, ոչ միայն հավատարիմ մնալով անոր իր կրած բոլոր դառնութեանց մեջ ալ, այլ և ան շատագուց հանդիսանալով անոր վարդապետութեանց իր զանազան երկերուն մեջ: Օրմանյանի այս կապը Հայ Եկեղեցվու հետ կրխեր անոր հավատքն այդ Եկեղեցվու վարդապետութեանց ճշմարտութեան մասին, ինչպես և անոր համոզումն այն առաքելութեան մասին, որուն կուված էր Հայ Եկեղեցին հայ ժողովուրդի կյանքին մեջ:

266 «Յո՛հոր և խոսքս, էջ 9—10:

270 «Մասիս», 1893, էջ 3996:

«Քրիստոնեական սկզբունքներու և ավետարանական վարդապետութիւններու խորապէս համոզուի մըն եմ,— կգրի Օրմանյան,— իսկ անոնց ճշտագույն և համարմանագույն գրութիւնը կճանչնամ Հայ Եկեղեցւոյ մեջ, և անոր հետեւեմ եմ ճշմարտութեան հետեւելու նպատակով»:

Համոզումով էր որ, ուրեմն, բաժնւած է ան կաթողիկե Եկեղեցիին, ուր կրնար բարձրագույն դիրքերու հասնիլ, և ուր սակայն

պիտի բթանար իր մեջ մարգր ու հար պիտի խամբեր: Երկու տարբեր զգացումներ կվարեն զինքը,— խրոչանք կաթողիկե Եկեղեցիին, որ իր միտքը կկաշկանդեր, և զայրույթ դեպի վատիկանը, որ կկոտորէր հայ կաթողիկե համայնքը լատինացիներէ: Բայց այս երկու զգացումները բավական պիտի լըլլային, եթէ շունենար նաև այն համոզումը, թէ Հայ Եկեղեցւոյ մեջ ավելի ազատ պիտի ըլլա հոգին:

4. ՈՒՍՈՒՑԻՉԸ

Խոսիլ ուսուցիչ Օրմանյանի մասին, կնշանակե խոսիլ անոր հիմնական առաքելութեան վրա, ասպարեզի մը վրա, որ անոր նախնորածն էր և որմէ ճակատագիրը սակայն հեռացուց զինքը հաճախ:

Օրմանյան ինքն իսկ մեզ կրտս, թէ իր կողումը առավելապէս կրթական ասպարեզն էր, բայց ճակատագիրը թույլ յտվավ մնալ հոն. «Ճաշակ, պիտոժակ, կոշում, ավելցուցինք ևս հարմարութիւն և կարողութիւն, ավելի ուսումնական քան թէ վարչական մարդ մը կսահմանեին դիս իննել: Ընդհակառակն զավտական առաջնորդութեան կողմեցա շուտով, և յոթը տարի ազեկ գեշ շարունակեցի: Բարեպատե՛հ առիթ մը դարձուց դիս ճաշակիս, և Մայր Աթոռու Ճեմարանին ուսուցչութեան հրավիրվեցա, բայց շատ քիչ միջոց, միայն 1887—1888 զարդական տարին կրցա շունակել»<sup>271</sup>:

Հոգևորականներու նոր սերունդ մը պարզկվել Հայ Եկեղեցիին, այլև զանոնք օժտել ընդմնավոր դատնալու ձիրքով ալ, Գպրեվանքի զույգ դաստիարակները, Օրմանյան ու Դուրյան, տարբեր էին ինչպէս խառնվածքով և հակումներով, նույնպէս մեթոդով ալ: Դժբախտ քան պիտի ըլլար, եթէ Արմաշեն ըլլոր ելլողները մեյմեկ Դուրյան դատնային: Հայ Եկեղեցիին առաքելի մարդոց պետք շուներ միայն, ոչ ալ մտքի արժանիքներով միայն օժտված ու թրծված մարդոց: Հայ Եկեղեցիին պետք էին նաև վարչական ձիրքերով օժտված հոգևորականներ: Օրմանյան տեսական գիտելիքներու, այսինքն հմտութեան հետ, վարչական հակումներ ալ պատվաստել իր սաներուն, որպէսզի հալ թեմերուն վաղվան առաջնորդները դատնան:

Նույն խոստովանութիւնն է, որ ըրած է նաև այլուր: Արմաշի 25-ամյա հորեկանին առթիւ լույս տեսած հատորին մեջ, Գպրեվանքին «Առաջին զաղափարը» պարզելու առին, ան կգրեր. «Հակառակ իմ ձգտումներուն, գրական և ուսուցչական ասպարեզի դուրս՝ վարչական պաշտոնի կոչված էի 1880-ին, երբ 1887-ին առջև կբացվեր ուսուցչականին դատնալու առիթը, Մայր Աթոռու Հոգևոր Ճեմարանին մեջ: այլ, բարե՛, շատ կարճատև եղած էր այդ գոհունակ պաշտոնավարութիւնս: Զանազան պատճառներ ստիպեր էին զիս հեռանալ, և 1888 օգոստոսին Կոստանդնուպոլիս կդառնայի, նորեն վարչականին մեջ մտնելու նախազգացմամբ»<sup>272</sup>:

Ու պետք է ըսել, որ Դուրյանի ու անոր անմիջական ձեռնասուններուն շունչին տակ թրծված հոգևորականներն անգամ հեռվէն հեռու քան մը ժառանգեցին նաև Օրմանյանն: Անոնք ևս ժողովուրդին ծոցը գացին տքնելու համար, ինչպէս բեր էր մեծ դաստիարակը:

Շահեկան մանրազեպ մը կպատմեն իր աշակերտները: Ճարտասանութեան դասի մը պահուն, երբ Աստուծո զոյութեան մասին ապացույցներու որոնման կվարժեցներ իր սաները, կթվե բոլոր կարելի փաստերը, զորս կրնար հոգևորական մը ճարել այդ առթիւ: Ու վստահ, թէ իր ունկնդիրները արդեն օժտած է անհրաժեշտ զննքերով, որպէսզի իրենց կարգին անոնք ալ փաստեն Աստուծո մը զոյութիւնը, կհարե իր աշակերտներուն զարմացական ակնարկներուն տակ:

Ճեմարանի, Արմաշի և Երուսաղեմի իր տարիներուն մասին խոսած առին գրած ենք Օրմանյան ուսուցչին վրա ալ: Ըսենք այստեղ ևս, որ Օրմանյան ուսուցանելու իր ուրույն մեթոդը ունեցավ, և այդ մեթոդին շնորհիւ էր, որ կրցավ ոչ միայն զարգացած

— Հիմա ալ ապացուցենք, թէ Աստված շկա...

Ու միևնույն ճարտարութեամբ կշարն բոլոր այն փաստերը, որոնք հնարված են ուրանալու համար Աստուծո զոյութիւնը...

Այր՝ իր աշակերտները ճարտասանութեան վարժեցնելու համար, փաստ ու հակափաստ ճարելու արվեստին զանոնք ըն-

271 Քեղիկ. «Ամենուն տարեցույցը», 1908, էջ 20.  
272 «Արմաշու զարմակներն 25-ամյա հորեկանին առթիւ. 1889—1914», Կոստանդնուպոլիս, 1914, էջ 147:

տաննեցնելու համար էին հոնտոտական այս փորձերը: Բայց անոնք ցույց կուտան միև

նույն ատեն, թե Օրմանյան վարպետ էր թեզ մը ընդլայնելու և հիմնավորելու:

5. ՔԱՐՈՂԻԳԸ

Օրմանյան կպատկանի հոգևորականներու թիվի մի մը, որ Հայ Եկեղեցւո եկամբ արդեն կազմված: Իր մտավոր պատրաստութիւնը լրիվ ստացած էր ան կաթողիկ մթնոլորտի մեջ, և օժտված էր բոլոր այն ձիրքերով. որոնցմով այդ մթնոլորտը կպատվաստե հոգևորականը: Քարոզիչի ձիրքը մեկն էր ազդոնցմե և կաթողիկ դաստիարակութիւն հիմնական պահանջներն մեկը: Առանց հոնտոր դարձած ըլլալու, ասպարեզ չէր իջներ կաթողիկ հոգևորականը:

Օրմանյան ևս իր բազմաթիվ ձիրքերուն քարոզիչ ձիրքը ևս կմիացնելու: Անոր համար քարոզչութիւնը անբաժան մասն էր հոգևորական ասպարեզին, և թերեւ ամեննն էականը: Ան շատ լավ գիտեր, թե քարոզիչն էր, որ ժողովուրդին կկապեր հոգևորականը և հնարավորութիւն կուտար անոր ժողովուրտին ևս ուսուցանելու:

Դասարաններուն մեջ իր դասախոսութիւնները պետք էին շատ տպավորիչ եղած ըլլալ, որովհետև անոնք կուղղվեին լսելու տրամադիր ունկնդիրներու: Բայց իր որսը քարոզչերը հասարակ ժողովուրդին համար չէին: Պետք էր մտքով լարվիլ, թափանցելու համար անոնց և հետևաբար հաճույք զգալու համար անոնցմե: Ոչ իր խոսելու ոճը, ոչ ալ իր արտաքինն ու իր ձայնը ունկնդիրը կախարհելու բնույթը ունեին, ինչպես էր. օրինակ, Գուրյանի մոտ, և ինչպես եղեր էր, կըսեն, Նարպիչի մոտ ալ: Օրմանյան կտպավորեր իր քարոզչերուն բովանդակութիւնը: Բայց տպավորվելու համար պետք էր ճիգ ընելի Նաև դուն ինքզի, Հոգեկան այդ տրամադրութենն զուրկ ունկնդիրը ավելի հաճույք կանոնէր, օրինակ, Հմայակ եպիսկոպոսի քարոզչներն, որոնք գիտեին ժողովուրդին դուրին թելերուն հետ խաղալ:

Հոնտորական գլուտներու մարդը չէր Օրմանյան իր քարոզչներուն մեջ, ինչպես կըսեին թե եղեր է Նարպիչ, կամ գրական անակնկալներու վարպետ մը, ինչպես մեր օրերուն եղան Գուրյան ու Գուշակյան: Իր քարոզչները հոնտորական ոճի պահանջները անշուշտ կըրացնեին, և հավանաբար մեծ մասամբ խորհրդածութիւն նյութ եղած էին սկիզբնն:

Եվ ազոր համար հասարակ ժողովուրդին ուղղված ատեն ավելի պարզ կդառնային իր քարոզները, կամ ավելի ճիշտ՝ ունկնդիրին համաձայն նյութ ու ոճ կփոխեր, ինչպես քարոզչներուն նույնպես և ճառերուն մեջ, զորս

կատակներով և սրամտութիւններով ալ կհամեմներ հաճախ:

«Տեսակ մը ուսուցչութիւն է քարոզչութիւնն ալ,— կըսեն Օրմանյան,— որուն խնամքով հետեւած եմ, և ընդհանուր բնութեան մեջ իբրև ընդունելի և զնահատելի քարոզիչ մը ճանչցված եմ: Քարոզչութիւնն մեջ հետեւած ուղղութիւնն սեղծ է անխտիր ժողովուրդին հասկացողութիւնն համաձայն խոսիլ, հետեւաբար ճորճոր հարկ եղած է՝ բարձր ոճ զործածած եմ, բայց ամեննն սովորական, լրսեմ ստորին, ոճով խոսած եմ հետամնաց գլուտներու մեջ: Ջանադած եմ միշտ բարոյական գետնի վրա մնալ, վարպետական նրբութիւններն և հոնտորական դարձվածներն խորշած եմ սկզբունքով, պատմականը զործածած եմ պետք եղած լափով միայն: Դամբանականներու և հարսանիքներու մեջ զգուշացած եմ մարդահաճ ու շողոքորթ ակնարկներն, իսկ հանդիսական ատենաբանութիւնց մեջ միշտ աշխատած եմ գործնական գետնի վրա մնալ, կացութիւնը անխարդախ բացատրել, և պետք եղած պայմանները հրահանգել: Քարոզչական ոճը դպրեվանքցւոց ալ հատկապես ավանդած եմ, և Դպրեվանքի ոճը սկսած է բնմերու վրա տիրապետել, հնօրյա ոճնն բոլորովին տարբեր, ավելի ազդեցիկ և ավելի զնահատված»<sup>273</sup>:

Դամբանականները, զորս հանդիսավոր առիթներու միայն կխոսեր, ճշգրիտ վերլուծութեան էին, որոնց մեջ հանդուցալը կընայիր ճանչնալ իր կյանքին ու գործունեութիւնն ամեննն բնորոշ գծերով: Չերձ էին անոնք ձուլածո ճամբարտակութիւններն, որով ուղած կըլլան մեր մեջ զամբանականները հաճախ, և հետո էին ասպարեզված ըլլալի:

Օրմանյան փուլը լուսնեղալ իր քարոզչներուն և ճառերուն մեկ ժողովածուն ձգելու: Բավական հրահանգիչ պիտի ըլլային անոնք հոգևորականներու նոր սերունդին համար՝ սրբազան պերճախոսութիւն իրենց մարզանքներուն առթիվ: Ճիշտ է, որ շատշատերը մեր եկեղեցականներն դրի առած և յույս բնձայած են իրենց քարոզները, բայց Օրմանյան նյութը զարդացնելու իր ուրույն ձևը ունեւր, զոր աստվածաբանական համալսարանն բերած էր հետը և զոր մասամբ ներարկեց ճեմարանի և Արմաշի իր սաներուն ալ:

273 Երեւան և խոսք, էջ 415—416:

### Յ. ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒ

Հայրենասիրտ փնտռել հանրային մարդու մը մեջ ապերախտ զեր էլ, նախ անոր համար, որ մոլորութիւն է հայրենասիրութիւնը նկատել մարդու մը բացառիկ առաքինութեանց մաս, որովհետեւ հայրենասիրութիւնը պատվո տիտղոս մը չէ ինքնին, այլ պարտականութիւն մը, Բայց ժողովուրդի մը մեջ, որուն մոտ առաքինութիւնները հրեման պղտորած են ստրկութեան զարհրուածացածներու, այլասերածներու, ուրացողներու դասեր ստեղծելով, Հայրենիքը սիրելիք ևս փառքի մակդիր մը կ'զտանայ:

Հետո, մարդ չի գիտեր, թէ ո՞ր կակոսի է ո՞ր կվերջանա հայրենասիրութիւնը:

Միայ պիտի ըլլար ենթադրել, թէ հայրենասիր միայն անոնք էին, որ լեռներուն վրա կուզեցան թշնամիներուն զեմ կամ իրենց կյանքը տվին բանտերուն մեջ կամ կախադաններու վրա: Հայրենասիր է անոնք եղան. որոնք հավատացին հայ ժողովուրդի վաղվան փրկածութեան և ճանապարհ հարթեցին անոր, որոնք տքնեցան թուղթերուն վրա և գիշերներուն քամեցին իրենց աչքերուն ու մտքին լույսը, հանուն հայ ժողովուրդի հոգեկան փերելքին: Ազատագրական պայքարին մեջ կոպի գաշտին վրա ինկողներուն շափ հայրենասիր էին և անոնք, որոնք ամբողջ կյանքը մը րրտինք թափեցին և իրենց աչքերը փակեցին զրիշը իրենց մատներուն մեջ: Բայ է, որ տքնեցան սիրով, իրենց ճիգը շարկարկելով, հավատալով Հայրենիքի մը:

Ճիշտ է, զեռ ատեն մը կար, երբ Հայրենիքը հեռավոր երազ մըն էր քոլորին համար, իսկ շատերուն համար պարզ ցնորք մը, բայց այն մարդոց կողքին, որոնք կծրտեին այդ երազը իրականացնելու իրենց զոհաբերութեան գնով, կային և այնպիսիները, որոնց սրտին մեջ տարտամ հավատքը կար հեռավոր հնարավորութեանց և որոնք կփորձեին հայ ժողովուրդը իր հողին վրա ամուր ու բարդավաճ պահել և դարկ տալ անոր հոգեկան վերելքին՝ որպեսզի տոկա մինչև բաղձացված օրը:

Այս քմքնումով հայրենասիր էր Օրմանյան ալ: Ու հայ դատը խորթ չէր իր սրտին, իր վերաբերումը զեպի այդ դատը որքան ալ ձե փոխեր ժամանակին հետ,— մերթ ուղղակի հաղորդակից այդ դատին ստեղծած հուզումներուն, ու մերթ գգույշ և վերապահ, մերթ ալ դարձյալ բոնկած հույսերով մոտակա ապագայի մը համար: Այնպես որ Օրմանյանի մեջ հայրենասիրը փնտռելու համար պետք է հետեիլ հանգրվաններուն, որոնց մեջն անցավ Հայկական դատը, ու

զնեյ Օրմանյանի ապրումները այդ հանգրվաններն ամեն մեկուն միջոցին:

Այս էջերուն հետեղները տեսան հոգեկան կայր, որ Օրմանյանը կմիացնէր հայ ժողովուրդի հուզումներուն, սկսելով իր տաքարյուն երիտասարդութենէն, երբ կոպի կմղեր Վատիկանի զեմ, որպեսզի ան ձեւը շատ հայ ժողովուրդի ավանդութիւններուն: Մեր օրերու բմբումումով, հայրենասիրութիւն այն օրերուն զեռ չկար. բայց ի՞նչ անուն տայ զգացումներու այն շերմութեան, որ խորթ միջավայրի մեջ ու խորթ դատարակութեամբ սնած ու մեծցած երիտասարդ հոգեորական մը կխանդավառե, հայ ավանդութեանց շատազով հանդիսացնելով զայն և հանուն անոնց պայքարի հանելով ահավոր ուժի մը զեմ, որ Վատիկանն էր:

Հետո, զայն տեսնք Հայկական դատի իսկապես ճակատագրական մեկ պահուն, Քեոլինի ձախողութեան օրերուն, Դժբախտաբար շատ քիչ բան դիտնք այն աջակցութեան մասին, զոր Օրմանյան բերավ ներսես Վարժապետյանին, Հայ եկեղեցվոց ցիրկը դառնալին առաջ և հետո, այսինքն այն միջոցին, երբ հայ հույսերը Քեոլինի մեջ շախախտված, հայ ժողովուրդը կարիք ուներ ամուր մնալու հոգեպես: Եթէ հայրենասիրութիւն էր հայ տառապանքը զավանդան իրերէլ Պոլիս և անոր աղաղակը Եվրոպայի զոսացած խղճմտանքին մեջ պոռթկալ, ի՞նչ անուն տայ հապահ հայ ժողովուրդի հուսախարութեան օրերուն սիրտ տալ անոր, ու նոր հույսերու պատրաստել զայն: Ներսես Վարժապետյան լավաղույն աջակիղն ուներ հանձին Օրմանյանի տեղատուութեան այդ տարիներուն, երբ հոգիները ավիշի պետք ունեին, նոր մակընթացութեանց տրամադիր դառնալու համար:

Հուսախարութեան ալիքը գացիր էր նաև զավառ: Հույսերով ողնորվել հետո պահ մը, դարձյալ հողերու մեջ կտքար Հայ Հայրենիքը: Պետք էր հույս տանիլ անոր և ամոքել անոր դավերը: Եթէ հայրենասիրութիւն էր այդ ցավերուն թարգմանն ըլլալ աշխարհի առջև՝ սարսելու համար անոր կոնծած զգացումները, հայրենասիրութենէն ավելի բան մըն էր այդ վշտերուն մոտենալ ու անոնց սպեղանի փնտռել վերքերուն վրա հակած: Օրմանյանի յոթ տարիները կարն ու մեջ վկայութիւնն են նվիրական առաքելութեան մը, որուն ինքզինքը սիրով կհանձնէր հայ հոգեորական մը, հայ հողին վրա տքնող ու տվալստող ժողովուրդի մը մատաղ ընկելով իր ամենեն թարմ ու աշխույժ տարիները:

Կարին կգտնվի՞ր Օրմանյան, երբ «ձայնը հնչեց էրզրումի հայոց լեռներեն»։ Հայ տառապանքին առաջին պոռթկումն էր ան նոր օրերու մեջ։ Գաղութներու մեջ թափառելն հետո ընդունայն, հայ հայրենասիրությունը կուզար բողբոջիլ հայ հողին վրա։ Օրմանյան մյուս է իր կապը մատնանշած ատեն այդ շարժումին հետ։ Երբ այդ շարժման մասին կխոսի, արդեն կգտնվի տարիքի մը մեջ, ուր մարդ տարբեր կնայի երիտասարդ օրերու իր խանդավառությանը գիտենք, թե հայոց տարբեր աղբյուրներն գիտենք, թե հայոց լեռներեն եկող այդ ձայնը հնչեց իր հողին մեջ ալ, ապրե՛ր էր սրտանց այդ բացառիկ օրերը, և երբ շարժումը կխեղդվի իր խանձարուրին մեջ, ստիպվե՛ր էր իր ճիգերը նվիրել զոհերը փրկելու և աղետ մը կանխելու համար։

Հայ Եկեղեցին դարերով ապրե՛ր էր ինքն ալ հայ ժողովուրդի բովանդակ հոգն ու խոռովքը։ Արտասովեր ու հուսացներ, տքներ ու պայթարեր էր անոր հետ մեկտեղ։ Բայց կարիք ուներ թարմանալու և ան նոր օրերու մեջ ևս դեր կատարելու համար նոր մարդիկ պետք էր հասուննային իր ծոցին մեջ ալ։ Հայ ժողովուրդի նոր հոգերուն հետ նույնանալու համար նոր հովիվներ պետք էին։ Փո՞քր ծառայություն էր հայ ժողովուրդին հոգևորականներու այդ նոր սերունդը պարզե՛լ անոր։ Օրմանյանի մեկ տարին ճեմարանի մեջ, և անոր վեց տարիները Արմաշ, վկաներն են այն խոր գիտակցության, թե Հայ Եկեղեցին պետք է ի սպաս դնել հայ ժողովուրդին, անոր կյանքի բոլոր հանդրվաններուն մեջ։

Հայ ժողովուրդին ծառայած ըլլալ կարծեց՝ անոր խաղաղություն պարզելու իր ջանքերը թափած ատեն ղո՞նդակ այն օրերուն մեջ, երբ Համիդի սարսափին տակ կապրեր երկիրը, և հայ ժողովուրդը աստուգութան գերի էին դարձուցներ դեպքերը։ Հայ ժողովուրդին ծառայելու այն ձևը, զոր ան որդեգրած էր իր պատրիարքության տասներկու տարիներուն, հաճելի ձև չէր շատերուն համար։ Բայց Օրմանյան հպարտ է, որ երբեմն ողորջելով, երբեմն բողբոջելով կրցավ գազան մը զսպել տասներկու տարի, և եթե փոքր գոհացումներ միայն ձեռք ձգեց ահապտր ճիգերու և կարիքներու այդ տարիներուն, բայց հայրդեցավ առիթ շտալ նոր աղետներու։ Արդ՞վ ան կկարծե, թե լիուրի կատարած է հայրենասիրական իր պարտքը հայ ժողովուրդի պատմության ամեննի ղո՞նե մեկ պահուն։

Լավագույն ի՞նչ բանով պիտի կարենար ծառայել հայ ժողովուրդին իր առանձնացման օրերուն, քան հակելով գրքերուն վրա,

պրպտելով ու տքնելով։ Մտքի վաստակը, որ այդ տարիներուն պտուղն է, մեծագույն տուրքն էր, զոր ան կրնար ընծայել հայ գրականության, և անով նաև հայ ժողովուրդին, որովհետև ան կուզար կարևոր պակաս մը լրացնել ճիգը, զոր ըրավ մեկ կողմն Հայ Եկեղեցի մեծբողջական պատմությունը մեզ տալու իր հարակից բոլոր դեպքերով, և մյուս կողմն Հայ Եկեղեցի տեղը ճշտելու համար Եկեղեցիներու ընտանիքին մեջ, նոր մեկ փաստն էր իր անխախտ սիրուն դեպի իր ժողովուրդը՝ բոլոր պայմաններու տակ, նույնիսկ դառնություններով լեցված մեկ պահուն։

Հայագինը եղեռնին ատեն ևս ամուր մնաց ան իր հոգով։ Երբ Վեգրապտում-ի վերջին մասը կշարադրեր Երուսաղեմի մեջ, մտալ օրեր էին հայ ժողովուրդին համար։ Երիտասարդ թուրք-երը ամայացուցե՛ր էին այն ատեն Հայաստանը և ցանուցիք ըրեր էին հայ ժողովուրդի մնացորդացը։ Այդպիսի օրերու մեջ մարդիկ տրամադրի կըլլան հոգեկան բեկումի։ Օրմանյան հետ է սակայն հայ ժողովուրդը մեղավոր կարծել այն շարժումներուն մեջ, զորս ան փորձե՛ր էր հանուն իր ապագային, և որոնք պատրվակ պիտի ըլլային դահճներուն համար իրենց նախճիրը արդարացնելու։ Օրմանյան մեղավոր չի գտներ հայ ժողովուրդը, ոչ այն պահուն, երբ կյանքի, ինքի և պատվի ապահովություն կպահանջեր աշխարհեն, այլ այն ատեն՝ երբ իր դիմումներուն մեջ հուսահատ, խաբված, պիտի մղվեր հուսահատական ճիգերու։

Խոսելն հետո եվրոպական պետությունց անտարբերության վրա դեպի հայ ժողովուրդի ցավերը, և հայոց կրած հուսախաբությունից և հուսաբեկության վրա, Օրմանյան կրսե, թե աղոնք եղան հայությունը շարժման մղողը, ու կշարունակե։ Եվրոպական գաղտնեքու մեջ գործադրվող բարեկամությունները հառաչ եկած էին բնիկ տարբերուն խրտուելն և զինյալ ընդդիմություններն և ներքին շփոթություններն, ինչ որ գործնականապես կթելադրեր, թե այս միայն ըլլա բարեկամություններ ձեռք ձգելու միջոցը։ Այդ մեկնությունը հայտնի կերպով ալ կկրկնվեր ասիակողմը գտնվող եվրոպական յուրապատասխաններն, կթելադրվեր մայրաքաղաքի դեսպանատանց ակնարկներն, և Եվրոպիո մեջ խոսվածներն և գրվածներն, որ եթե հայեր իրավցնե բան մը ձեռք ձգել կուզեն, պետք է իրենք առջև անցնին և հաստատուն կամքերնին գործնականապես ցուցնեն, և շոշափելի կերպով հավաստեն, թե իրենք են երկրին բնիկներն ու տերերը, և ոչ գուրդերը, զի զինյալն է, որ երկրի մը

տերը կճանչցվի և ոչ անգնեք, իսկ արգահատանք շարժելու համար մուրացիկ հայեցվածներ բավական չեն արդյունք պատրաստելու Այդ գրգիռները դուրսեն լսվելով և ներսեն զգացվելով փոփոխություն մը առաջ բերին հայ մտայնության վրա, և 1878-և 1882 հանդարտ աղերսարկուն և խեղճուկ աղաչավորը, գրեթե բռնադատյալ նոր միջոցներու մղվեցավ, և հայուն կյանքին ու գործին վրա փոփոխություն նշմարվեցավ<sup>274</sup>,

Օրմանյան հայկական շարժման պոռթկումին մեջ հավասարապես պատասխանատու կնկատե թե՛ թուրք կառավարությունը և թե՛ նվերական, շեշուկեն դիտողը և անաչառ կշռադատողը հայտնապես կտեսնե, որ կերպով մը Օսմանյան կառավարությունն էր փոփոխության պատճառ տվողը, երբ հանդարտ աղերսարկուն կանարգեր և խռովարար պահանջողը կգոհացներ, մինչ բոլորովին հակառակը պետք էր ըլլար յուր քա-

ղաքագիտական ընթացքը, եթե յուր իսկական նպատակն էր հպատակները շահիլ և անոնց բարեկեցությունը պատրաստելու, Բարենորոգումներ խոստացող կառավարությունն ոչ նվազ պատասխանատու էին հակող պետություններն ալ, որոնք ամեն միջոցներ, ազդու սպառնալիքներ, բռնադատիչ պահանջներ, նավային ցույցեր լխնայեցին ապրտամբած և խռոված տարրերը գոհացնելու, և լոկ բերանացի կամ անցողակի խոսքերով գոհացան հանդարտ աղերսարկուններու պաշտպանության համարս:

Այլուր խոսեցանք իր մտածումներուն վրա հայ ժողովուրդի ապագային մասին, Ըսված այնպիսի պահու մը, երբ մշուշի մեջ էր դեռ ամեն ինչ, և զանոնք կշարադրեր աշխարհն կտրված, անոնք կշարունակեն վկաները մնալ այն շերժ սիրուն, զոր կտածեր ղեպի իր ժողովուրդը, և անշեջ հավատքի մը ղեգեպի անոր ապագան:

7. ՕՐՄԱՆՅԱՆ ԻՐ ԱՊՐԱՄ ԱՏԵՆ

Սխալ պիտի ըլլար փնտռել, թե ինչ էր հանրային կարծիքը Օրմանյանի կյանքի գահազան շրջաններուն: Հանրային կարծիքը առածական րատ մըն է միայն. ան կփոխվի ամեն մեկ դեպքե հետո, հաճախ մեկ պահիկն մը:

Օրմանյան հայ հորիզոնին վրա երեցող այն մարդոցմեն էր, որոնք իրենց խոր պատրաստությունը և իրենց ուժեղ նկարագրով կոչված էին աչքառու դառնալ առաջին իսկ պահին, Ու հետո, իր կյանքն ու գործունեությունը այնպիսի աղմկայից հանգրվաններն անցած են, որ թերուզեմ հոսանքներ միշտ պիտի ստեղծվեին իր անվան շուրջ:

Իսկ թե ի՞նչ է եղած ժամանակակիցներուն իրենց կարծիքն ու վերաբերումը դեպի Օրմանյան, դժվար է երկու բառով հարցը սպառելու Անոնք փոխված են ժամանակին հետ, ավելի ճիշտ՝ Օրմանյանի կյանքին հանգրվաններուն հետ մեկտեղ: Օրմանյան ինքը նույնը շմնաց մեկ հանգրվաննն մյուսը, որպեսզի նույնը մնար նաև իր շուրջի մարդոց գիրքը: Բայց պետք է ըսել, որ Օրմանյան համակրանք միայն քաղեր էր ի սկզբան, և շատ երկար առնել:

Իր գիրքը հակահասունյան պայքարին մեջ համակրության հոսանք մը ստեղծեր էր իր շուրջ: Հայ եկեղեցվո գիրկը դառնալի առաջ, Օրմանյան տեղ գրաված էր արդեն հայ ժողովուրդի սրտին մեջ: Պայքարը, զոր ան կմղեր Վատիկանի դեմ աշխարհի աչքերուն առջև, հայ ավանդությունը ի պաշտպանու-

թյուն, սիրելի դարձուցած էին անոր անունը ամեն հայու:

Օրմանյանի հանդեպ համակրությունը իր գագաթնակետին հասավ իր հանդիսավոր մուտքին հետ Հայ եկեղեցվո գիրկը: Ժեստ մըն էր, որ չէր կրնար հուշումով ու խանդավառությամբ շողջունվիլ:

Օրմանյան էրզրումեն կմեկներ տարբեր լուսապսակով մը. ներկա էր եղած իւր սեպինը հնչեց էրզրումի հայոց լեռներենն և Համիդեն ետ էր կանչված, այսքանը բավ էր արդեն, որ համակրության նոր ալիք մը ստեղծվի իր շուրջը:

Ցարական վարչակարգին ցույց տված ատելությունը անոր դեմ, որուն հետևանքով էջմիածինը կթողուր ան, նոր առիթ մը եղեր էր, որպեսզի հայ ժողովուրդին սերը անգամ մը ևս ջերմանա:

Այնպես որ երբ Ազգը Արմաշը կհանձներ իրեն՝ այն վստահությունը էր, որ հայ եկեղեցվո համար նոր շրջան մը կբացվի, թարմացման ու ծաղկման շրջան, շնորհիվ հոգեվորական այն նոր սերունդին, որ հոն պիտի հուսանար իր և Գուրյանի շունչին տակ: Այդ վստահությունը պիտի արդարանար առաջին հունձքին հետ, զոր Արմաշ պարգևեց Հայ եկեղեցիին:

Ձուհրապ Օրմանյանը իր «Սանոթ դեմքեր»-ու շարքը կմտցնե՞ր ճիշտ այդ օրերուն, «Այն պարտասուն հոգիներուն մեջ, որով մեծ մասամբ մեր եկեղեցականությունը կձևանա, գերաշնորհ Օրմանյան կաղնիի մը ամբարձիկ ուղղությունը պահած է. ան-

274 «Ազգապատում», էջ 4405—4406:

խախտ ու ամուր կերպով իր սրբազան կո-  
չումին վրա, առանց պարծենալու շարունա-  
կելով հատուցանել իր պարտքը, պարզու-  
թյամբ ու համեստությամբ. այնպես, ինչ-  
պես պարտքերը պետք է որ հատուցվին  
Այսպես, սիրահոժար գացած է հոն, ուր կո-  
չած են զինքը Ազգն ու Եկեղեցին, Կարինի  
Եռնադաշտեն մինչև Արմաշի մեծաստանը,  
ճշմարիտ վարդապետ մը ըլլալով ո՛չ մի-  
այն այն սուրբ օծումով, զոր Եկեղեցին  
կընդունի, այլ այն ավելի սուրբ օծումով, զոր  
անձնվիրությունը կուտայ իր համակերպիկ  
մարդու զվարթախոհությունը՝ կյանքի պայ-  
մաններուն ճշմարիտ և ուղիղ ըմբռնումն է:  
Գերաշնորհ Օրմանյան գիտե՞ք, որ ամեն ճամ-  
բաները հարթ ու շիտակ չեն կրնար ըլլալ  
աշխարհիս վրա և զառիվարներ կան, ուրկե  
կրնա գործիլ մարդ. բայց գիտե՞ք նաև, որ ա-  
մեն զառիվայր, միանգամայն զառիվար մըն  
է. վար կահիս, բայց վեր ալ կելլես. և միթե՞

մարդկային ճակատագիրը այս անգույն կի-  
վէջին շինված չէ՞: Կրունքը ասիկա ուսուցած  
է իրեն, իսկելութեան քով Հարությունը նըշ-  
մարած է միշտ ու՛ վայրկյան մը սրտաքեկ  
չէ հղածա:

Զառիվարը շուշացավ: Հաջորդեց իսկա-  
պես դժբախտ շրջան մը: Ազգը ապերախտ  
պաշտոն մը պիտի տար անոր, Պոլսո պատ-  
րիարքությունը, շարդերեն անմիջապես հե-  
տո, գազանի մը դեռ կատղած մեկ պահուն:  
Այդ պաշտոնին մեջ ինչպես ալ վարվեր Օր-  
մանյան ու ինչ հրաշք ալ գործեր, պիտի  
չկրնար ծափեր քաղել: Տառապող ժողովուր-  
դը սպեղանիներով ամոքելը դժվար էր, ու  
շարժառիթներ միշտ ալ պիտի ըլլային զայն  
դառնացնելու:

Ձոհրապ սխալած չէր: Թե՛ն դանդաղ, հա-  
սավ սակայն և զառիվերը: Զառիվերին վրա  
էր, երբ մահը հասավ: Զառիվերին վրա էր.  
երբ Օրմանյան անցավ պատմութեան:

8. ՕՐՄԱՆՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌՁԻՎ

Ժամանակն է նյութը փակելու: Բայց բնո-  
րոշիւն հետո իրենց տեղին Օրմանյանի կյան-  
քին և գործունեության զանազան շրջաննե-  
րը, պետք էր նաև բնագծանոր ակնարկի մը  
մեջ խտացնել զանոնք այս էջերը փակելի ա-  
ռաչ:

Օրմանյան բացառիկ դեմք մըն է մեր իրա-  
կանության նորագույն պատմության. մեջ,  
բացառիկ իր խառնվածքով ու անհատակա-  
նությանմբ նախ, բացառիկ նաև իր պատ-  
րաստությանմբ ու իր վաստակով. ուրեմն  
բացառիկ պիտի ըլլար որքան իր նկարա-  
զրին՝ նույնքան իր գործունեության մեջ:

Բայց մոլորություն պիտի ըլլար զայն  
անջատել իր ժամանակին ու իր շրջապա-  
տեն՝ զայն դատելու ժամանակ, որովհետև  
նման փորձ մը պիտի սայթաքեցներ մեզ,  
որքան որ ալ իր անձը և գործը շահեկան  
կողմեր ունենային առանձին քննված առե՛ն  
ևս, իրենց այդ բացառիկ բնույթին համար:

Օրմանյան բացառիկ հղավ, որովհետև  
բացառիկ էին ղեպքերը, որոնց մեջ աչքերը  
բացավ և հասունցավ, ինչպես որ բացառիկ  
էին անոնք ալ, որոնց մեջ գործեց և որոնց  
խառնվեցավ և ինքը:

Ըսենք նախ առանց այլևայլի, թե Օրման-  
յանը կպարտինք այն ամոթալի փորձերուն,  
զորս Վատիկանը կատարեց մասնիկ մը  
կորզելու համար հայ ժողովուրդի արդեն իսկ  
աղկաղկ մարմնին, և անոր մեջ խորտակելու  
համար հայրենի ամեն ավանդություն: Հայ  
կաթոլիկ համայնքին ծոցին մեջ մղված  
տխուր պայքարն էր արդարև, որ Օրմանյա-  
նը բերավ հայ ժողովուրդին:

Օրմանյան հայ ժողովուրդի ծոցը կուզար  
մեր նորագույն պատմության ամենին դժբն-  
դակ մեկ պահուն. Բեռլինը նոր էր մեզ հու-  
սախար ըրեր և մեզ լքեր մեր դահլճներուն  
լախտին ու տապաքանի տակ: Պոլիս կխար-  
խափեր շփոթության մեջ ու գավառը մատնը-  
ված էր հուսահատության: Փավտի ցավներ  
իրենց կանչեցին Օրմանյանը, ու Կարնս  
ղեպքը զինքը հոն գտավ: Կերպով մը իր  
կրակի մկրտությունն էր եղեր այդ:

Հայ Եկեղեցին հոգնած էր, ու կարոտ էր  
թարմանալու, հոգեորականներու հին սե-  
րունդը անպետ սկսած էր դառնալ նոր օրերու  
համար. նախածեռնություն մը պետք էր,  
որպեսզի ստեղծվի հոգևորական նոր սե-  
րունդ, և Օրմանյան բուն մարդն էր նման  
առաքելության մը համար. Ճեմարանն ու  
Դպրեվանքը իր կյանքին ամենին պտղաբեր  
առիթն եղան:

Եվ ահա հայկական տազնապար, ցույցերու  
և շարդերու զույգ մը տարին. Իզմիրյան՝  
աքսորական, անգլուխ մնացած է Ազգը-  
ցեցեր եկած են Ազգին գլուխը, որոնցմե  
ազատիլ կուզե սակայն ան. հոգևորական մը  
պետք է, որ հոժարի մտեն ղժնդակ լուծի մը  
ներքև և Օրմանյանը կկանչեն այդ լուծին,  
զոր ան կկրն տասներկու տարի, հայ ժողո-  
վուրդի ցավի ճիւղերուն և զազանի մը սար-  
սափին ներքև:

Այդ մտայլ օրերուն է, որ հանկարծ կայա-  
թի Թուրքիո Սահմանադրությունը և բոլորը  
կգինովցեն. Ազգը ամբոխ կդառնա և ամ-  
բոխը զոհ մը կուզե իր կրած ցավերուն փո-  
խարեն: Այդ զոհը Օրմանյանը կըլլա, որով-  
հետև Ազգին գլուխը գայն է գտած իր խեն-

դուժյան վայրկյանին, Հալածանք ու գատաբանի մը տարի, մինչև որ ամբողջ կխաղաղի, կիրթերը քիչ մը կմարին, և Օրմանյանը մեղքե կադատեն ու պաշտոններու կանցնեն դայն դարձյալ:

Եվ ահա աշխատանքի ուրիշ վեց տարիներ, այս անգամ լեցուն տարրեր ճիգերով և հուզումներով:

Ամբողջ իր կյանքը փոթորիկի մեջ կանցնել այսպես Օրմանյան, որովհետև փոթորիկի մեջ էր ինքը Աղղը այդ բովանդակ շրջանին: Ուժեղ իր նկարագրին մեջ, համառ իր խոնավածքով, ճարտար իր պատրաստութեամբ, ան կրցավ դիմանալ ուրիշ փոթորիկներուն: Ուրիշ մը, իր տեղը, պիտի շվարեր, պիտի հուսահատեր: Ինք անվկանդ մնաց բոլոր փորձութեանց պահերուն, դիմացավ փառքին որքան հալածանքներուն, և մինևույն ատեն զննեց ու պրպտեց, տքնեցավ ու ստեղծեց և Աղղին նվիրեց մտքի վաստակով լեցուն մախաղ մը:

Այս էր Օրմանյանը:

Ազմուկով լեցուն իր այդ կյանքին մեջ ամենեն փոթորիկայիցը Պոլսո պատրիարքութեան իր տասներկու տարիներն եղան և անոնք էին, որ իրենց ետեմն պիտի բերին այնքան վեճ և այնքան դառնութիւն:

Տասնամյակ մըն է այդ, որ ամենեն դժնդակ շրջաններն մեկն էր հայ կյանքին, ու դժնդակ պիտի ըլլար նաև դերը, որ պիտի փեճակեր հայ հոգեոր պետի մը:

Եթէ դանդաղաբան շարժեր տեղի չունեցան Համիդի այդ վերջին տասներկու տարիներուն, հայը հալածվելի չդադրեցավ երբեք: Ժնշումը, որուն ենթակա էր ամբողջ երկիրը, կանդրադառնար անշուշտ հայուն ալ: Վարչակարգին ընդհանուր շարիքներն զատ, հայը կկրէր սակայն անհամար ուրիշ տառապանքներ ալ, որոնցմե զերծ էին մյուս տարրերը: Կեղծումները, որոնց ենթակա էր հայ գյուղացին, ոչ մեկը չէր կրէր մյուս տարրերն. երթեկի սեղմումները երկրին մեկ շրջանն մյուսը առաջնապես հայոց համար էին. բանտերը ավելի շատ լեցուն էին հայերով:

Այս կացութեան առջև ի՞նչ կրնար ընել հայոց պատրիարքը, երբ դեմը գազան մը կար, որմե կախում ուներ ամեն ինչ, և նվրուպ մը քիչ հեռուն, որ փակեր էր աչքերն ու խղճմտանքը: Ուրիշ ճամբա չունէր շարիքը մեղմելու համար, քայց եթէ աղերսն, բողոքն կամ հրաժարիլ:

Օրմանյան կրսե, թե երբն ալ փորձեց իրենց տեղին և երեքն ալ օգուտ քաղեց առաջն կամ նվազ չափով:

Յավը ամոքելու համար բավական չէին անշուշտ ձեռք առնված այդ դուրջն արդունքները, ու հետևարար հայ ժողովուրդը

կշարունակեր տառապիլ. ու ժողովուրդ մը, որ կտառապի, իր վարիչները կմեղադրե. աղկե էր ընդհանուր դժգոհութիւնը, որ կար Օրմանյանի դեմ. ժողովուրդը կտրանջար, որ անտարբեր է իր պատրիարքը:

Կմոլտար նաև արտասահմանը. ցավերը, որ արձագանք կգտնեին զաղութներուն մեջ, չէին կրնար զանոնք ալ չլրդովել. հարազատ եղբոր մը տառապանքը մարդ ինքն ալ կզգա: Ու դժգոհութիւնը Պոլսո պատրիարքին դեմ ավելի խորունկ էր անշուշտ դուրսը: Անուշ ջուրի մեջ մարդ ավելի քաշ կդառնա:

Օրմանյանը կմեղադրեին, թե չափազանց ստրուկ է աղերսած ատեն, թե իր բողոքները թույլ են չափազանց, իսկ հրաժարելու իր փորձերը ձեռակաշտութիւններ են միայն:

Ներսի ու դուրսի այս դժգոհութիւններն էին, որ տարիներով պիտի խմորվէին, տարբերային ձևով պայթելու համար օր մը. այսինքն 1908 հուլիսին, երբ Համիդ խոսելու հրաման տվաւ ներսի ժողովուրդին, ու երկրին դուռները բացավ դուրսն եկողներուն: Կհար նպաստավոր էր Օրմանյանի թշնամիներուն համար՝ շահագործելու տարիներով կուտակված այդ դժգոհութիւնները և լուծելու իրենց վրեժը այդ դժգոհութիւնները պոռթկալով արտաոռց ցույցերու մեջ, անոնց ահալոր համեմատութիւններ տված արգեն:

Դժգոհութիւնները ցույցի վերածված, և քրթմնջլունները մեղադրանքներու, հանցափոր մը կսեպվեր արգեն Օրմանյան, ու դայն նստեցուցին ամբաստանյալի Աթոռին վրա, մեղադրելով որ խուլ է եղած Աղղին ցավերուն, ծունկ չոքած է ստրուկի պես Համիդի առջև, և կառչած մնացած է աթոռին:

Ատեն անցավ, մինչև որ Օրմանյան պատասխանեց ամբաստանութիւններուն, նախ գինք դատողներուն՝ պաշտոնական իր բացատրութիւններով, ու հետո հանրային կարծիքին ալ՝ իր գրքերուն միջոցով:

Օրմանյան պատասխանեց ինչ որ կրցաւ, իր բացատրութիւնները բավական եղան, որ զրգոված մտքերը խաղաղին և մեղմանան բորբոքած կրքերը, և իր դատավորները զերծ կացուցանեն զայն իր վրա կուտակված մեղադրանքներն:

Քայց անպարտութեան վճիռ չէր դեռ այդ Այդ վճիռը ժամանակը պիտի տար, և առանց շատ երկար սպասելու: Երբոր, տասնամյակ մը իսկ լրոլորած, հայ ժողովուրդի գլխուն պայթեին ավելի ահալոր աղետներ, և աշխարհը հանդիսատես ըլլար այնպիսի սարսափներու, որոնց առջև աննշան պիտի թվէին Համիդի սարքածները:

Եվ այդ ատեն է, որ մարդիկ հարց պիտի տային, թե ի՞նչ բրավ Օրմանյան իր շրջանի համեմատարար դուրջն հալածանքներուն

ատեն, և ինչ ըրին հայ ժողովուրդի հետագա զեկավարները, երբ այլևս բողոքը շրջանը վաղուց անցած էր, և հայ վարիչներուն ծավառանալ և ընդվզիլ կմնար համատարած ավերին ու սուգին առջև

Չեր միտքը բերեք հալածանքի ահալոր այն մյուս շրջանը, զոր պիտի ապրեր հայը օճերիտասարդ թուրք-երուն օրով: Յիշեցեք 1915-ը, հայաշինչ սարսափներու տարին, երբ հայ մտավորականությունը խողխողված և հարյուր-հազարավոր հայեր, խլված իրենց օջախներեն, ջարդված էին տարագրության ճամբուն վրա, հայ սրբությունները պղծված էին ու կոտորածներեն ճողոպրածները կմռնային միշտ բնաշնչման սպառնալիքի տակ:

Ի՞նչ որով հայ ժողովուրդը այդ բոլորին դեմ, Ճիշտ է, ընդվզեցավ ան տեղ-տեղ, ու սուղ ծախսեց արյունը: Բայց ի՞նչ ըրին անոնք, որ դեռ ղեկավար կսեպվեին հայ ժողովուրդին: Բողոքի ճիշ մը կրցա՞ն հանել մերակույտին և Երեսփոխանական ժողովին Մեք բազմած թուրքին հայանուն մանկավիհները: կրցա՞վ բերանը բանալ Սահակ Խապայան կաթողիկոսը, զոր թուրքը տարեր բազմեցուցեր էր Երուսաղեմ, իբրև Հայոց Հոգևոր Պետ, Զավեն պատրիարքը աքսոր քելի և հայ հոգևորականությունը ստվար մասով խողխողելի հետո:

Չեր միտքը բերեք այս բոլորը, ու հետո միայն դատեցեք Մաղաթիա արքեպիսկոպոս Օրմանյանը:

Սխալ պիտի ըլլար ըսել: Թե Օրմանյան իր նոր վերելքը միմայն ժամանակին կպարտի, նոր-նոր դեպքերուն, որոնք եկան խռովի հայ կյանքը և այլապես ահալոր փորձությունց առջև դրին մեզ: նոր-նոր մարդոց, որոնք դեր կատարեցին այդ նոր դեպքերուն պահուն և մոռցնել տվին վրեպները, զորս գտած էինք հին մարդոց վրա, ու նոր լահանիչներուն, որոնցմով ստիպված ենք դատել իրերը կես դարու փորձատուփեն մը հետո:

Ճիշտ են ասոնք բոլորը: Օրմանյան բան մը անշուշտ կպարտի ժամանակին, ինչպես կպարտին բոլոր անոնք, որոնց հանդեպ արդար չէ եղած իրենց իսկ ժամանակը, կրթով դատելով իր օրերու մարդիկը:

Բայց ան պիտի չկրնար Հայ Եկեղեցվո պատմության մեջ ուրույն տեղ մը իրեն համար պահանջել, եթե քնն պահած լըլլար Ազգին դեմ՝ իր կրած նախատինքներուն համար, հոգեկան իր դառնության մեջ լքած ըլլար հայ ժողովուրդին ու Հայ Եկեղեցվո ծառայելու իր ուխտը, եթե քամած լըլլար աչքերուն ու մտքին լույսը՝ գրլի մնայուն վաստակ մը ձգելու համար իրմե ետքիններուն:

Եթե կապիտուլեն հեռու չէ Տարայան ժայռը, երբեք ՚ն Տարայան ժայռն ալ մարդ

կրնա կապիտուլ բարձրանալ կրկին: Խոշոր են անշուշտ նման փոխարեթյունները մեր օրերու մարդոց մասին ըսվելու համար: Օրմանյանի պարագային համար կրնանք համարձակ ըսել, թե ան վերելքի այդ ճիգը ըրավ: Ու կրնանք համարձակ ըսել նույնպես, որ տարբեր պայմաններու մեջ տարբեր պատրիարք մը կրնար ըլլալ Օրմանյան: Կոյուտի, Նալյանի դարուն, օրինակ, ան պիտի կրնար հայ հոգևոր կյանքին մեջ իսկապես դարագլուխ մը բանալ, անցյալ դարու կեսերուն՝ ինքն ալ աջակցիլ հայ նոր վերածնության, մեթոդ մտցնելով տարտըղենած աշխատանքներուն մեջ, և ապագա խաղաղ օրերո՞ւ Հայ Եկեղեցին իր հիմնական առաքելության տանիլ ու նոր օրերուն դիմացնել զայն:



Այս էջերը գրելու սկսած ատեն տարբեր էր նպատակս: Կուզեի պարզապես ակնարկ մը նետել Օրմանյանի կյանքին ու զորժին վրա, ու խղճի պարտք մը կատարել մարդու մը հանդեպ, որուն նկատմամբ անխրավ եղան իր ժամանակակիցները, որովհետև կրթով դատեր էին զայն, իրենց կույր պաշտամունքին և իրենց կույր ատելության մեջ և զոր, սակայն, ժամանակ էր այլևս պաղարյուն կերպով դատելու, թոթափած ամեն նախապաշարում, այսինքն վերեն նայելով մարդկային բիծերուն վրա, որոնցմե հարկավ Օրմանյանն ալ ունեցած էր, և փորձելով ավելի ճշգրիտ տեսնել զայն հիմա՝ քան երբ իր մոտն էինք:

Հիմա, որ այս էջերը կփակեմ, կտեսնեմ, որ նյութը ստիպած է զիս շատ լայննալ, բայց միևնույն ատեն գոհունակությունն ունիմ ուրվագիծը տված ըլլալու մարդու մը, որուն օրերուն ապրեցանք առանց լիովին ճանչցած ըլլալու զայն, ու նաև ազոտ պատկերը շրջանի մը, զոր հիմա ավելի ճշգրիտ կտեսնեմ քան այն օրերուն, երբ զայն կշնչեինք: Սույն էջերը փակած ատեն կըզգամ, թե շատ բան փոխված է մեջս Օրմանյանի մասին ունեցած հին կարծիքներես: Հիացում մը իրեն հանդեպ ունեցած եմ միշտ ալ, բայց կտեսնեմ, որ հիմա ավելի կըմբռնեմ զայն իր բուն արժեքին մեջ, իր մասին հիմա ալ որոշ վերապահումներ ունիմ, բայց կնշմարեմ հիմա, որ երբեմն իր վրա գտած բիծերս չկան: Առհասարակ բան մը փոխված է մեր հին դատաստաններեն:

Թող զարմանալի լթվին հակասությունները, զորս մարդ կկարծե երբեմն նշմարել երեկվան իր մտածումներուն ու այսօրվան-

ներուն միջև: Իրականին մեջ հակասութիւններ չեն տարբերութիւնները, դորս կգտնե մարդ, երբ կվերհիշե իր պարապօրութիւնները դեպքերուն անմիջական ազդեցութեան տակ և երբ անոնց կանդրադառնա կես դար հետո: Կես դարը երկար շրջան է, որպեսզի մարդ տարբեր դատե հին որբու դեպքերն ու դեմքերը, և այդ դատաստանը շատ ավելի անհրաժեշտ կդառնա, երբ մարդ կգտնվի դեպքերու առջև, որոնք թնուող էին բացառիկ պայմաններու և որոնք քնթացան բացառիկ ալ պայմաններու մեջ, իրենց ամեն քայլին տարբեր անակնկալներու առջև դրին մեզ՝ դեպքերուն հետ անմիջական կապ ունեցած ըլլալինք, թե հանդիսատեսներ եղած պարզապէս:

Այդ տարբերութիւնները հաստատել դառն չի գար մեզ, որովհետեւ համոզումն ունինք, թե անոնք հետեանք են այն փորձութիւններուն, դորս փոթորիկները բերին: Ու սիրով կանդրադառնանք անոնց, որովհետեւ եթե այդ փոթորիկները շատ քան սարսեցին մեր մեջ, փոխեցին շատ քան մեր կարծիքներն մարդոց ու իրենց գործերուն վրա, հպարտ ենք սակայն, որ անոնք լկրցան հովտ մը այլայլել սիրո այն զգացումն, դորս ամեն հայ մարդ կպարտի իր ժողովուրդին, պաշտամունքն դեպի հողը, ուր թաղված են իր մեռելները և ուր կշնչեն իր ավանդութիւնները, և այն անուշ հավատքն, թե հայ հողին պիտի երբեք յմեռնի ստեղծագործ իր ճիգերուն մեջ այդ հողին վրա:

